

Մ. ՊԱՊԻԱՆ

107

ԽՈՐՀԵՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏԱՄԵՒԻՆՆԵ ՏԱՐՎԱ
ԼՆԹԱՑՔՈՒՄ

9(47.925)
7-23

ԳԱԴԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱԺՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
8 ՕՐԵՎՈՅՆ • 1939

ՊՐՈԼԵՏԱՐԻԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

5 OCT 2011

141

9(47925)

Դ-93

Մ. ՊԱՊՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՏԱՄԱԻՆՆԸ ՏԱՐՎԱ
ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայ ժողովուրդը ամենահին ժողովուրդներից մեկն է, շատ ավելի հին, քան այժմյան յեւրոպական մի շարք ժողովուրդները:

Հայաստանն իր աշխարհագրական դիրքով ընկած և Արևելքի և Արևմուտքի ապրանքափոխանակության և առևտրի համար ամենահարմար ճանապարհների հատման կետում և ունենալով բնական հարստությունների հսկայական միջոցներ, դարեր շարունակ հանդիսացել և անվերջ ճակատամարտերի և արշավանքների թատերաբեմ։ Նրա վրա արշավել են՝ բյուզանդացիների, բարելացիների, արաբների, սսմանների, մոնղոլների և շատ ուրիշ կողողացիների, բռնակալների, արնախում հարկահանների վոհմակներն ու հորդանները։ Սակայն հայ ժողովուրդը շարունակ հերոսարար պայքարի յե նետվել բոլոր տեսակի կեղեքիների դեմ, հանուն իր ազատության, իրավունքների, հարազատ հայրենի հողի պաշտպանման։

Հայ ժողովուրդը դեռ ուշքի չեկած, մեկ պատերազմական մրրիկից հետո վրա եյին հասնում մյուս բռնապետների ավերումները, վորոնք բարբարոսաբար քանդում և ավերում եյին ստեղծագործ հայ ժողովրդի կուլտուրան, հափշտակում եյին նրա հալալ աշխատանքից և արդար վաստակից դոյցած ունեցվածքը։ Նշված հարստահարիչներին փոխարինում եյին ներքին՝ հայրենի կեղեքիները՝ ֆեոդալները, իշխանները, հոգևորականությունը և սրանց կամակատարները, վորոնք մարակում եյին հայ աշխատավոր



6296
39

М. ПАПЯН
СОВЕТСКАЯ АРМЕНИЯ
ЗА ДЕВЯТИНАДЦАТЬ ЛЕТ

Государственное издательство политической литературы
Ереван • 1939

Դյուղացուն նույն անդթությամբ և ուժով, ինչպէս գործառմ
եյին ոտար կեղեքիչների մտրակն ու սուրբը: Նրանք յեղել են
մեկը մյուսից դաժան և արնախում:

Այս բոլորից բացի՝ վրա հասալ ոռւսական ցարիզմի,
Նրա ուազմա-Փեռդալական խմաբերիալիզմի նողկալի տիրա-
պետությունը, վորի ամենաըստամ լծի ու կրնկի տակ
ավելի քան հարյուր տարի հեծում եր տաղանդավոր հայ
ժողովուրդը-Հայաստանի աշխատավորությունը:

Յարիզմը վոչ մի միջոցի առաջ կանգ չեր առնում իր
խարխուլ հիմքերը ամուր պահելու, իր պետական փոտած մե-
քենան ամրացնելու համար: Այդ նպատակով կազմակեր-
պում եր աղքամիջյան կոկիներ ու կոտորածներ, գլխավո-
րում եր հրեական ջարդերը նախապատրաստելու դործը:

Յարիզմի տիրապետության տարիներին հայ ժողովուր-
դը, մնացած վորքը աղջությունների (հրեաների, ուղբեկ-
ների, կիրդիզների, տաճիկների, վրացիների, թյուրքերի)
նման դատապարտված եր ամեն տեսակի հալածանքների,
ճնշման ու շահագործման, մասսայաբար աղքատանում ու
ընչազուրկ եյին գառնում հալալ ու քրտնաշան աշխատանք
կատարող աշխատավորները: Յարական վլուսիկանության,
չինովիկների, ճորտատեր կալածատերերի, գյուղական
աստիճանավորների, հողեռոր կեղեքիչների շնորհիլ մեծ չա-
փերի յեր հասել անտերների, վորքերի, աղքատների, լաց
ու կոծով ապրողների թիվը: Հայաստանը դարձել եր զարկ-
վածների, զրկվածների, վողբի ու վորբի հայրենիք: Այն
ժամանակական կացությունը, աշխատավորների դրությունը
մի քանի տողերի մեջ այսպես են նկարադրել հայ ժողովրդի
տաղանդավոր բանաստեղծ անմոռաց Հովհաննես Թումա-
նյանը.

«Մանի, մանի, ճախարակ,
Նստենք բանի, ճախարակ,
Անտերին տեր, ճախարակ,
Վորքերին հեր, ճախարակ:

Լուսնի լուսով մանեմ յես,
Սպիտակ վասեր անեմ յես,
Աղքատ որով ու լացով,
Վորքեր պահեմ մանածով»:

Շարունակում ե.

«Վաղուց թեե իմ հայացքը անհայտին և ու հեռվում,
Բւ իմ սիրալ իմ մաջի հետ անհուններն և թափառում,
Բայց կարուով ամեն անդամ յեր դառնում եմ զեսի քեզ,
Մզկուում և սիրաս անվերջ քո թառանչոց աղեկեզ,
Ու գարթական զավկներիդ լուռ շարքերից ուժապառ,
Յեզ ոյուղերից և չներից ախուր, դատարկ ու խալար,
Զարկված հայրենիք,
Զրկված հայրենիք:

Խոնվում են մտքիս հանգեղ բանակները անհամար,
Տրորում են քո յերեսը, քո զաշտերը ծաղկալառ,
Ու ջարդաբար վոհմակները աղաղակող վայրենի,
Ավարներով, ավերներով, ինջույջներով արյունի,
Վոր զարձրին քեզ մշտական ու ու սուդի մի հովիտ,
Կեղծ ու լաւկան քո յերգերով, հայացքներով անժողուտ,
Վողբի հայրենիք,
Վորբի հայրենիք»:

Միանդամայն հասկանալի յէ այն ժամանակվա տինուբը,
խալար, դատարի, ուժապառ, լալկան, անժողիտ հայրենի-
քի դրությունը:

Հայ ժողովրդի և Հայաստանի աշխատավորության
կյանքի անտանելի պայմանները շարունակվեցին Հակահեղա-
փոխական դաշնակցական-մառուղերիստ բանդիտների տիրա-
պետության մոայլ տարիներին ևս, վորոնք այժմ հնու-
թյունների արխիվն են նետված անվերադարձ կերպով:

Հայ ժողովրդի ամենալոիներիմ թշնամի դաշնակցական-
տիրահռչակ պարոնները՝ անգլո-Փրանսական իմպերիալիզ-
մի հավատարիմ վարձու շները, իրենց իմպերիալիստ տերե-
րի ցուցումով և աջակցությամբ կազմակերպել եյին՝ մարդ-
կության պատմության մեջ չտեսնալած և նմանը չունեցող

ամեն տեսակի զալրելի դործեր: Մեծը, թալանը, կողուպուտը, աղջամիջան հայ-թուրքական, հայ-վրացական կոտորածները յերկերը հասցրել եյին լիակատար կործանման և աշխատավորությանը՝ Փիզիկական վոչնչացման յեղբին:

Այն պահին, յերբ համաշխարհային իմպերիալիստական տեսական սրատերազմի պատճառով յերկը ժողովնեռությունը քայլայիլ և դաշնակցականների տիրապետության տարիներին ուղղակի կործանման աստիճանի յերտեսել, այդ պահին մտրակների հարփածների տակ թալանում եյին աշխատավոր շինականի վերջին ունեցմածքը, մորթեզի լցնելին պահեստները և փրկելին իրենց՝ բոսկ սովոր սպասվող կատասրոֆայից: Այդ ժամանակ արդեն դաշնակը վսոկին եր հասել, աշխատավոր ժողովությը բուռն ատելությամբ եր լցվել գիշատիչ գայլերի—արյունուց կառավարիչների հանդեպ: Դաշնակցականների վերջին ու ամենախիստ միջոցները չեյին ազդում աշխատավորության վրա, պայքարը ընթանում եր ճակատ առ ճակատ, կառավարությունը կանգնած եր խորտակման առաջ: Սյդ մասին և վկայում ստորև նշված զեկուցազրերից մեկը, ուղղված գաշնակցական ներքին և զորական նախարարներին, վորի մեջ ի միջի այլոց ամված ե.

«Գավառումս անպատճախնատու զինված խըմբի թիվն որեցը առելանում ե, այժմս գոյություն ունեն (ցույց ե տալիս 12 խմբապետների անունները: Մ. Պ.) խմբեր, վորոնք պետական գույքերով և գեներով մտնում են զյուղերը, գոռով բռնազրավում են տները, դուրս կանդում զյուղացիներին, խլում նրանց գույքերը, ան ու սարսափը ամենուրեք ե: Զեր կարգադրությամբ մեր միլիցիայի մեծագույն մասը գտնվում է Ալեքսանդրապոլի գավառում, մեր ուժերով հնարավոր չե զայել այդ անարխիան: Այս պարագաներում մենք հնարավորություն չունենք վոչ

զորքին հաց, վաշ ել յերկարուդուն վառելափայտ հասցնելու: Այս դրությունը յերկար չի կարող շարունակվել, ժողովուրդը զգած ե այս ամենից: Փետական ամբարը բոլորուին դատարկ ե, նման պայմաններում ժողովուրդից հաց գանձելը անհնարին ե: Փետական ապարատը հիմնովին խանդգում ե:

Այս դրության մասին թե Ձեզ և թե այլ Վարչության՝ մեր բոլոր դիմաւները անհետուանի են մնացել: Մենք անկարող ենք նման պայմաններում պատասխանատվություն հանձն առնել:

Այսու խնդրում ենք Ձեր շտապ և վճռական կարգադրությունը: Նման պայմաններում կատասրութան ամխուսափելի յե, վորից հետո ամեն ինչը ուշ կլինի»:

Ալեքսոնի Զեմստվոն. նախ. ստորագրություն

22-ին նոյեմբերի 1920 թվին

(Գետարխիվ, Գոնդ № 77, դորժ № 51, էջ 760)

Դաշնակցական նախարարների միջոցառումները ինչքան կարուել և վճռական լինելին, իզուր եր, նբանք կյանքից դատապարտված եյին վոչնչացման: Այսուտամենայնիվ գասակարգային թշնամին, թեկուղ իր մահամերձի վերջին ըրջանում, ալելի կատաղի յե դառնում: Հենց այդ մահամերձ ըրջանում իմպերիալիստական պետությունների հավատարիմ ծառաները, իրենց «Ալեքսանդրա» նախատակի «Ճողից ծով» Հայաստան ստեղծելու սիրահարները ուղում եյին վերահաս կատասրովայից դուրս դալ արբեմջանյան աշխատավոր ժողովրդին կոտորելու, թալանելու, նրանց գյուղերն ու շենքերը հրկիդելու միջոցով: Յուրաքանչյուր աշխատավորի սիրտը ճմլվում և ատելությամբ ե լցվում, հրշելով գաշնակցական բանդիստների հրկալոր արարքները: Նրանց զգիւղի դործունելության մասին ե վկայում

աւտուցիչ Հյուսեի ին Ալսունի Զարեջի 1920 թվի հունվարի 23-ի հետագիրը՝ ուղղված Բարձրի պառլամենտին, վորի մեջ առված է:

«Հետազգում ենք յերկրորդ անգամ: Զանդեղուրի վոչնչայման յենթակա մուսուլմանները հղում են բարի առողջության ցանկություններ: Վորքան ել դանդեղուրցիները վողբային, նրանց հառաջանքները մնացին ձախն բարբառո համապատի ու իւրների կերպերից այն կողմը չանցան: Կտրված են կանանց ստիճանները, յերեխանները թափված են, զլուխներն ու մարմինները կտրված, արյունաշաղախ: Դաշնակցականների ձեռքը ընկած գեղեցիկ աղջիկները բռնարարված են... Յեթև կառավարությունը արտակարդ միջոցներ ձեռք չառնի, մուսուլմանները կորած են»:

(Պետ-արթիվ, Փոնդ № 3, գործ № 478, էջ 61)

Դաշնակցական ավարակների չայկան ավելի հեռու յե գնում: Հաշուության սրայմանադիր կնքելու ժամանակաշըրժանում ավելի կատաղի կերպով կոտորում ե աղբբեջանական աշխատավորությանը:

Դաշնակցական «կառավարիչների» խորամանկ ու սան-ձարձակ արարքների մասին ե վկայում Աղբբեջանի արտաքին զործերի մինիստրի 1920 թվի հունվարի 22-ի հետագիրը՝ ուղղված դաշնակցական արտաքին զործերի մինիստրին: Նրա մեջ առված է:

«Հայաստանի կառավարության զորքերը, զինված հրոսակային բանդաների հետ միասին՝ Զանդեղուրից Շուշիա գավառի ուղղությամբ սկսել են հարձակուղական գործողություններ, ընդվորում նրանց շարժման ճանապարհի վրա ընկած մուսուլմանական դյուզերը յենթարկված են կոտորածի, վորոնցից ինը թարանված են վերջին որերս: Բուռն կերպով բաղու

քելով դրա դիմ, անհրաժեշտ եմ համարում Զեղ հայոններու հետությալը՝ 1919 թ. նոյեմբերի 23-ին՝ Աղբբեջանի և Հայաստանի կառավարությունների միջև հաշտության համաձայնությունը ստորագրելուց հետո և դրան հաջորդող ժամանակամիջոցում Զանդեղուրի գավառի ըրջանում դաշնակցական զորքերի կողմից վոչնչայման մուտքագրությունը դյուղ...»:

Ինչքան ուղղում եր, թող Աղբբեջանի արտաքին զործերի մինիստրը փաստերը կոնկրետ նշեր և դեպքերը հուղիչ նկարագրեր, միեւնույն եր, դաշնակցական կանիբարները՝ նժդենը և նրա նման ավագակները առանց խոճի խայթ դրալու կոտորում եյին անխնա: Այդ մասին ե վկայում 1919 թ. նոյեմբերի 30-ի՝ Նժդենի հրամանը՝ ուղղված Ղափանի, Գրնդեկանի, Տաթեվի զորամասերի պետերին: Նրա մեջ առված է:

«Կրակի մատնել, այրել Փիրիլուկից դեպի արեմուքը գտնվող մուսուլմանական բոլոր դժուղերը: Գրուների ժամանակ դորձածել մեծ քանակությամբ ուժանակ և պայթուցիկ տակառ: Նշանառությունը կատարել կարբիդային լամպերով, դունավոր խարույներով և դինամիտային փամփուշտներով:

Ղափան-Գնդեվաղ-Գողթանի ուղղական ուժերի ընդհանուր հրամանատար՝ Նժդեն»:

Ահա այսպես եյին վարվում դաշնակցական մասների մասները աղբբեջանական և վրացական աշխատավորության նկատմամբ: Նույնը կատարվում եր աղբբեջանական, մուսավաթականների և վրացական մենչևիների կողմից: Անհերջ կոտորում եյին հարկան աշխատավոր ժողովուրդներին, հանուն մի բուռ բուրդուա-կալվածատերերի-կուլակ-առետրականների շահերի, ի հաշվի աշխատավորների բնաջընջման ու կեղեցման ավելի հարստանում եյին մի խումբ շահագործողները և խմբակեատ մասների ստուները:

Այն ժամանակ, յերբ հողագործ աշխատավորները կտրում եյին մի կտոր հացի, սնվում եյին կանաչով, հազար-ներով կոտորվում եյին սովոր, տեփ հիվանդությունից, դաշ-նակցական մառզերիստների ամենափոքր աստիճանավորնե-րից սկսած մինչև ամենախոշորները լողում եյին շաայլու-թյան ու ցոփի կյանքի մեջ: 1919 թվին՝ դաշնակցական պառ-լամենտի պատերի տակ համագլած կիսակենդան ու սովորի յենթակա բազմության աչքերի առաջ զինվորական առտի-ճանավորները շռայլում եյին հոկայական միջոցներ, ամեն որ քեփ ու ինձույք եյին կազմակերպում: Յերեանի ճաշա-րաններից մեկում կազմակերպված քեփի ժամանակ խմբա-պետի ձիուն քիշմիշով վիլավ են ուտեցնում և դուռում են «Զանդիքասար ատուեցյետ»:

Այսպես եր դաշնակցական տիրապետության տարինե-րին: Դաշնակցական հրեները յերկիրը դարձրել եյին ալե-րակների, վորբերի, համաճարակ հիվանդությունների, դե-բեղմանցների վայր: Գյուղատնտեսությունը, առանց այն ել աննշան արդյունաբերությունը հասցրել եյին անկման, վարելահողերը դարձրել եյին անմշակ, կործանման յեղրին եր հասել հայ ժողովրդի դարձրից իւլեր ստեղծադրությունը, դրեթե լիլլիդացիայի եյին յենթարկվել դպրոցնե-րը, աշխատավորների վազվա կենդանի մնալու հույսերը կտրված եյին: Միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության լույսի տակ, Լենինի—Ստալինի ամենա-հաղթ կուսակցության ղեկավարությամբ, ոռուս մեծ ժո-ղովրդի ոռնությամբ, հայ ժողովուրդը գտավ իր իսկական փրկությունը, իր յերկիրը հայտարարելով Խորհրդային:

1920 թվին Հայաստանի խորհրդայնացման առթիվ ըն-կեր Ստալինը դրեց.

«Տանջված ու բազմաչարչար Հայաստանը, Ան-տանտի ու դաշնակների վողորմածությամբ սովի, քայլայման ու գաղրի մատնված,—բոլոր քարեկամ-ների» կողմից խարված այդ Հայաստանն այժմ իր-

փրկությունը գտավ այն բանում, վոր իրեն հայ-տարաբերությունը կորեկտային յերկիր: Վոչ Անգլիայի, հայ-կական շահերի «քարավոր պաշտպանի» կեղծ հավա-տիացումները, վո՛չ Վիլսոնի տիրահռչակ տասնչորս կետերը, վո՛չ Սագերի կիգայի լայնագործ խոստում-ները՝ Հայաստանի կառավարման, երա «մանդատով» չկարողացան (և չեյլ'ն կարող) փրկել Հայաստանը կոտորածից ու ֆիզիկական բնացնցումից, — միայն խորհրդային իշխանության գաղափա՞րը խաղաղու-թյան և ազգային վերածննդի հետավորություն բե-րեց Հայաստանին... Թող գիտենան բոլոր նրանի, ում հարկ ե գիտենալ, վոր այսպես կոչված՝ հայկական «պրոբլեմը», վորի վրա ապարդյուն կերպով գլուխ եյին զարդում իմակերիալիստական դիվանագիտու-թյան հին գայլերը, իվինակի յեղավ լուծելու միաց և խորհրդային իշխանությունը»:

Հայ աշխատավորությունն ու Հայաստանի ժողովուր-դը, վորոնք ընդունակ են յեղել բոլոր տեսակի նվաճողնե-րի ու հավատակիչների դեմ անդուլ պայքարելու, հանուն իրենց ազատագրման, լայն իրավունքի ու ստեղծադրութ աշ-խատանքի, նույն տենչով ել պայքարում եյին հակահեղա-փոխական Դաշնակցության գեմ:

Հայաստանի աշխատավորությունը Լենինի—Ստալինի փառապանծ կուսակցության ղեկավարությամբ, յեղայ-րական ժողովուրդների ոգնությամբ, 1920 թվի նոյեմբերյան որերին վոչնչացրեց գաշնակցական բանդաները: Հայաստա-նին փրկություն բերեց մեր լայնածավալ հայրենիքի ան-պարտելի կարմիր Բանակը՝ Կիրովի, Որչոնիկիձեյի, Միկո-յանի առաջնորդությամբ:

Խորհրդային իշխանությունը իսպառ վերացրեց ազգա-միջան կոտորածները, սովոր, աղքատությունը, համաճա-րակ հիվանդությունները, տգեստությունը, իրավումքների անհավասարությունը և այլն:

Բնության կողմից ստեղծված բարիքները ի՞նչ սպաս դըբ-վեցին մարդկության ոգտագործմանը, խոսան ու անմշակ հողերը դարձվեցին պիտանի և բերքառատ, աշխատավորությունը դիմեց աշխատանքի, կյանքը դարձավ ուրախ ու ծագկուն։ Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը, մեր անծայրածիր հայրենիքի բազմազգ և բազմամիլիոն ժողովուրդների համերաշխ ընտանիքում, Լենինի Ստալինի անպարտելի դրոշը ճեռքին, վողերության ու խանդավառության գգացմունքով լցված, հաստատ համոզված ացիալիգմի հաղթանակներին՝ դնում ե դեպի յերջանկության նորանոր բարձունքները։

Հայ ժողովրդի ազատարար, մեր հայր ու բարեկամ մեծ Ստալինի ղեկավարությամբ ու ամենորյա ողնության շնորհիվ՝ ամբողջապես փոխվել է Հայաստանը։ Ամեն ինչից զուրկ, քայլքայված ու ավերված նախկին Հայաստանը դարձել է արդյունաբերապես զարդացած հանրապետություններից մեկը։

Նախկին Հայաստանը զուրկ եր ծանր արդյունաբերությունից։ Յերևանում կային մի քանի մանր-մունը գործարաններ մի քանի տասնյակ բանվորներով։ Այլպիսիներից եր՝ Շուստովի կոնյակի գործարանը 40 բանվորով, Գարեհելովների կաշվի, Տեր-Ավետիքովի մեխանիկական արհետանոցները և այլն։ Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը հանձնված եյին ոտարերկրյա կապիտալիստներին ոգտագործելու, այն ել 18—20 թվերին հասցվել եյին քայլքայման։

Դաշնակցության տիրապետության տարիներին այսպես կոչված արդյունաբերության արտադրանքը կազմում եր մոտ մեկ միլիոն 600.000 ռուբլի կամ այն ժամանակվածողության յեկամտի 10%-ը։

Խորհրդային իշխանության 19 տարիների ընթացքում անկի պես բուսել են Հայաստանի արդյունաբերական հսկա գործարաններն ու կոմբինատները, ինչպիսիք են Խորհրդա-

յին Հայաստանի պարծանք՝ Կիրովի անվան «Սովորեն» Սինթետիկ-կառուչուլի կոմբինատը (Յերևանում), վորի կառուչուլի թողարկման ժամկետը սահմանված է այս տարի, Քիմիական կոմբինատը (Կիրովականում), ցեմենտի գործարանը (Արարատում), Տեքստիլի և մակ կոմբինատները (Լենինի քաղաքում), պղնձի և պղնձարջասպի գործարանները (Ղափանում և Ալավերդում), Զեթ-ոճառի, կոնսերվի գործարանները և Արարատ ջրեստը (Յերևանում), Արթիկտուֆ և Անիպեմզա հանքերն ու թեթև արդյունաբերության ու սննդի մի շարք այլ գործարանները։ Կառուցվել են մի շարք ինչոր ելեկտրոկայաններ, ինչպիսիք են՝ Առաջին ու յերկրորդ Յերևանները, Քանաքեռները, Լենգեսը, Զորագեսը և մի շարք այլ ելեկտրոկայաններ։ Մոտակա տարիներին կավարտվի Սևան—Զանգվիլ կասկադը և այլն։ Ամենուրենք ուղարկվում և հայտարերվում են նորանոր հանքեր և բնական այլ հարստություններ, վորոնք թագնված են Հայաստանի հարուստ հողի ընդերքում։ Վերջերս հայտարերվել է Զանգեղուր լեռնավայրում պղնձի ու մոլիբդենի նիմչի նոր հանքատեղը, վորը մի քանի անդամ հարուստ ե, քան Ալավերդու և Ղափանի հանքատեղերը միասին վերցրած Հայաստանի հարուստ հողի յերկու հանքատեղ Զաջուռում (Լենինականի մոտ) և կարարալլարի շրջանում։

Խորհրդային Հայաստանը անցյալի հետամնաց ադրարային յերկրից վերածվել է ինդուստրիալ-աղբարային յերկրի։ Որինակ՝ 1913 թվին արդյունաբերության արտադրանքը յեղել է 21,7%, գյուղատնտեսությանը՝ 78,3%։ 1919 թվին՝ արդյունաբերության, արտադրանքը յեղել է 10%, գյուղատնտեսության արտադրանքը 90%։ 1928 թվին՝ արդյունաբերության արտադրանքը 22%, գյուղատնտեսությանը՝ 78%։ 1938 թ. արդյունաբերությանը 75,5%, գյուղատնտեսությանը 24,5%։

Այս թվերը ցույց են տալիս խորհրդային իշխանության որով և հատկապես Ստալինյան յերկու հնդամյակներին կա-

տարպած իսուր տեղաշարժերը արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի տեսակարգը կշռում : Յերկու հնդամյակների ընթացքում յերկրի արդյունաբերությունը աճել և չտեսնված չափով: Այս թվերը ցույց են տալիս նախկին Հայաստանի հետամնացությունը առհասարակ և արդյունաբերության գծով հատկապես: Ժողովնականության պատկերը լրիվ չեր լինի, յեթե ցույց չտայինք առանձին ճյուղերի արտադրանքի չափը: Այսպես, որինակ, արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքը (26—27 թվերի անհիպոլիս գներով—Հազար ոուրիներով) հետեւյան եր.

1913 թ. 1919 թ. 1938 թ.

ա) Արդյունաբերության և դյառղատանաեսության համախառն արտադրանքը	95.576	16.815	433.032
բ) Այդ թվում՝ արդյունաբերության համախառն արտադրանքը	20.724	1.688	326.808
շ) Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	74.852	15.127	106.224

Այս թվերը ցույց են տալիս ոռուսական ցարիզմի, այդ ամենավայրագ շահագործովի տիրապետության տարիները, յերբ արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքի առանց այն ել չառ քիչ քանակությունը՝ 95 միլիոն 576 հազար ոուրլուց 1919 թվին հասցեց 16 միլ. 815 հազար ոուրլու:

Այս թվերը ցույց են տալիս, վոր Հայաստանի խորհրդայնացման 19 տարիների ընթացքում ձեռք բերածն իրոք հնարավոր եր միայն խորհրդային իշխանության համերաշխ իրադրության մեջ սոցիալիզմի յերկրում, վորպեսզի մի տարվա ընթացքում արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմեր 433 միլիոն 32 հազար ոուրլի, իսկ արդյունաբերությանը 326 միլիոն 808 հազար ոուրլի:

1939 թվի 9 ամսում՝ նարկոմատային բոլոր արդյունաբերությունների արտադրանքը կազմում է 155 միլիոն 739 հազար 200 ոուրլի, վոր 1938 թվի 9 ամսում արտադրանքը համեմատությամբ կազմում է 129,4%:

Այս ապացուցում է, վոր մեր արդյունաբերության մեջ աշխատող ստախանովականները, հարվածային ու քրտնաջան աշխատանք կատարողները աշխատում են յերկրի հանդեպ իրենց պարտքը պատվավ կատարել: Արդյունաբերության բնագավառում աշխատող շատ կուեկտիվներ մտնելով XVIII կուռհամագումարի և Յըրդ հնդամյակի անվան սոցմրցման մեջ, աշխատում են ծաղկող հայրենիքին ավելի չառ և վորակով ապրանք տալ:

Խորհրդային իշխանության տարիների ընթացքում յերկրի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել են պատկառելի գումարներ, որինակ՝ մինչև 1938 թ. վերջը ներդրվել ե մեկ միլիարդ 610 միլիոն 172 հազար 500 ոուրլի, վորեց՝ առաջին հնդամյակում ներդրվել ե 312 միլիոն 277 հազար 600 ոուրլի, յերկրորդ հնդամյակում ներդրվել ե 974 միլ. 890 հազար 900 ոուրլի: Միայն 1938 թվին ներդրվել ե 349 միլիոն 897 հազար ոուրլի, իսկ մնացած գումարը ներդրվել ե մինչև 28—29 թվերը: Այդ գումարները ներդրվել են ժողունակության հետեւյալ բնագավառներում:

Արդյունաբերության մեջ

Առաջին հնդամյակում ներդրվել ե՝	80 միլիոն 453 հազար 300 ոուրլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել ե՝	233 > 639 > 600 >
Միայն 1938 թվին՝	84 > 683 > ոուրլի:

Եներգետիկ

Առաջին հնդամյակում ներդրվել ե՝	37 միլիոն 764 հազար 900 ոուրլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել ե՝	152 > 462 > 600 >
Միայն 1938 թվին՝	20 > 814 > ոուրլի:

Գյուղատնտեսության մեջ

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	96 ժիւկոն 580 հազար 500 սուրլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	199 > 753 > 100 >
Միայն 1938 թվին՝	47 > 689 > սուրլի:

Տրանսպորտում

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	23 ժիւկոն 951 հազար սուրլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	62 > 292 > 600 >
Միայն 1938 թվին՝	մեկ > 746 > սուրլի:

Լուսավորության բնագավառում

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	13 ժիւկոն 385 հազար 700 սուրլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	60 > 178 > 200 >
Միայն 1938 թվին՝	26 > 17 > սուրլի:

Առողջապահության բնագավառում

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	10 ժիւկոն 521 հազար 500 սուրլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	37 > 494 > 100 >
Միայն 1938 թվին՝	8 > 757 > սուրլի:

Բնակչարանային տնտեսության մեջ

Առաջին հնդամյակում ներդրվել է՝	22 ժիւկոն 103 հազար 800 սուրլի,
Յերկրորդ հնդամյակում ներդրվել է՝	107 > 426 > 900 >
Միայն 1938 թվին՝	28 > 479 > սուրլի և այլն:

Այս թվերը ցույց են տալիս մեր ժողովնակառության տարրեր բնակչառաներում տարեցաւարի կատարված աճը. քննորոշ են արդյունաբերության, ներդրետիկայի բնագավառում, վրաբես ժողովնակառության վրաըշիչ ճյուղերում արված ներդրումները: Հիմնականում այս յերկու բնագավառներից եր կախված սոցիալիստական դյուղատնակառության ու մնացած բնագավառների աննախընթաց թափը:

Խոշոր միջոցներ են ներդրված տրանսպորտի բնագավա-

ռում, վորը ժողովնակառության մեջ կատարելու յե այնպի-
սի գեր, ինչպես որդանիզմի արյունատար անօթները: Մե-
այն առյինալիստական իրավակարգում հնարավոր ե ժող-
ուասպառության, բնակչարանային շինարարության, առող-
ջարակառության մեջ ներդրել այնքան գումարներ, ինչ ներ-
դրվածած ե մեր ընդարձակ հայրենիքի անրաժանելի մի մասը
կազմող Խորհրդային Հայաստանում:

Մեր բոլոր նարկում ատային արդյունաբերական ձեռ-
նարկությունները 1938 թվին արտադրել են՝ 120 միլիոն
362 հազար 600 ո. ապրանք (հաշված 1926—27 թվերի ան-
փոփոխ դներով): Այդ տեսակետից արժեն նշել մեր արդյու-
նաբերության հետեւյալ ճյուղերը, վորոնք 1938 թվին ար-
տադրել են՝

Ալավերդու և Ղափանի պղնձի հանքեր՝ 11 ժիւկոն 610 հազ. ո. ար-
տադրանք:

Ամբողջ Ելեկտրո-կայանները՝ 20 միլ. 666 հազ. սուրլու Էնէրգիա
Քիմիական գործարաններ՝ 40 միլ. 255 հազ. սուրլու:

Մասի կոմբինատները (Լենինական—Յերևան)՝ 15 միլ. 253 հազար
սուրլու:

Հացի տրեսու՝ 13 ժիւկոն 244 հազար սուրլու:

Ծիախտաբի գործարանը՝ 8 ժիւկոն 919 հազար սուրլու:

Կարի գործարանը (Լենինական—Յերևան)՝ 11 միլ. 948 հազ. սուրլու:

Կոնսերվի գործարանն արտադրել ե 6 միլ. 991 հազ. սուրլու:

Լենինականի չուլքու գործարանը՝ 6 միլ. 154 հազ. սուրլու արտա-
դրանք և այլն:

Մի շաբաթ գործարաններ արտադրել են հետեւյալ քանակությամբ
ապրանքներ՝

Կոնկրետն—246 հազար զույր: Բյազ—13 ժիւկոն 700 հազ. մետր:
Կոնսերվ—18 ժիւկոն 250 հազար տուփ, խոռոշ կաշի՝ 374 հազար քա-
ռակուսի մետր, ծխախոտ՝ մեկ ժիւկարդ 600 ժիւկոն հատ: Հացի և
բուլկու թխածքներ—45 հազար 160 տոնն և այլ տեսակի բազմաքա-
նակ ապրանքներ ու մթերքներ, վորոնք գնում են մեր աշխատավորա-
կան մասսաների կարիքները հողալու համար:

Մեր ծանր արդյունաբերության զարգացման շնորհիջ
արագ թափով առաջ ե մղմում թեթև ու սննդի արդյունա-

բերությունը։ Այդ տեսակետից Հանրապետության պարծանքն են հանդիսանում Լենինականի Տեղադրի կոմիսարը և Տրիկոտաժի գործարանը, վորոնք յերկրին տալիս են խոչորքանակությամբ բյաղ, տրիկոտաժ, մանվածք և այլն։ Անցյալում առհասարակ թիթե և մնադի արդյունաբերությունից զուրկ Հայաստանը այժմ ունի մոտ կոմբինատոններ, Կոնսերվի, Մակարոնի, Ձեթ-օճառի, Ծխախոտի գործարաններ, Արարատ Տրեստ իր լայն ճյուղավորված ցանցով։ Տրեստ, վորը խորհրդային յերջանիկ ժողովրդի համար տարեկան տալիս ե ավելի քան 78.000 հեկտոլիտր գինի, 48.000 հեկտոլիտր կոնյակ, 20.000 հեկտոլիտր ողի, 330.000 հեկտոլիտր լիկյոր և այլ տեսակի քաղցր ըմպելիքներ։ Տրեստի ամբողջ շրջանառությունը տարեկան կազմում է ավելի քան 130 միլիոն ռուբլի։

Մեր ծանր, թեթև ու սննդի արդյունաբերությունները մեր լայնածավալ յերկրին տալիս են այն ամենը, ինչ անհրաժեշտ է մեր հայրենիքի ուրախ ու յերջանիկ ժողովություններին։

Ժողովրդական տնտեսության կարևոր ճյուղերից մեկը յերկաթուղային արանսալորտն է։ Այդ կարևոր ճյուղը նույնպես չափազանց աննշան եր զարդացած, իսկ Դաշնակցության տարիներին հասցված եր լիակատար քայլայման, չկար վառելանյութ, չկային նաև չվացուցակներ, կարդու կանոնի մասին խոսք լինել չեր կարող յերկաթուղային տրանսպորտում։ Զվացուցակների փոխարեն գործում ելին դաշնակցական չինունիկների կամայականությունները, բարձումը և բեռնաթափումը հսսել եր աննշան չափի։ Յեթե նկատի չունենանք Դաշնակցության տարիներին յեղած բարձումը և բեռնաթափումը, 1913 թվի համեմատությամբ 1938 թ. բարձումն ու բեռնաթափումը ավելացել ե մոտ տասնյերեք անգամ։ Բեռնաշրջանության ասպարեզում ձեռքբերված այս վիթխարի նվաճումներն անգամ գերազանցվե-

ցն։ Հետազայտման Այսպես որինակ, 1938 թվի կես տարվա համեմատությամբ 1939 թ. կես տարում պլանը կառարված է 109,3 %-ով։

Մեր ստախանովական ու հարվածային յերկաթուղայինները աշխատանքները կատարում են այնպես, ինչպես վայել և Ստալինյան հոգատարությամբ աճած հայրենասեր յերկաթուղայիններին։ Դաշնակցության ժամանակվա խճուղային ճանապարհների մասին խոսելն ավելորդ ե, քանի վոր խճուղային ճանապարհները հասցվել ելին այն աստիճանի, վոր վարելահողերից տարբերել հնարավոր չեր։ Մի շարք շրջաններում անդամ սայլուղի ել չկար։ Ղափանի, Գորիսի, Սխիտանի, Մեղրու միջոցուղյա ճանապարհները կարելի յեր անցնել հետիւն, իսկ ավրանքների տեղափոխումը միայն ձիերի և ջորիների միջոցով եր կատարվում։ Այժմ չես կարող գտնել մի շրջան կամ վորեւ դյուր, ուր ավտոմեքենա չանցնի, յեթե չհաշվենք հատ ու կենտ բացառությունները։

Հայաստանում խճուղային ճանապարհներության առարկեղում վիթխարի նվաճումներ ունենք։ Այս տարի հակայական աշխատանք է կատարվել խճուղի-ճանապարհների ասֆալտապատման, յեղածների լայնացման, իսմուրիների կառուցման վրա։ Այդ տեսակետից հրաշալի աշխատանք է կատարված Յերևանից Սևան տանող խճուղիում։ Իրենց լավ և հարվածային աշխատանքների համար խճուղային ճանապարհների վրա աշխատող մի շարք ընկերներ պարզեատրվեցին Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից պատվոգրով և արժեքավոր իրերով։

Հալաւ ու քրտնաշխան աշխատանք կատարող մեր բանկործառայողների, ինժեներ-տեխնիկների, մասնադետների շնորհիվ յերկերը ստացել ե չտեսնված արտադրանք, վորի շնորհիվ տարեցտարի աճել ե աշխատավարձի Փոնդը և բանվորների ու ծառայողների միջին աշխատավարձի չափը։ Այսպես, որինակ,

Բանվոր-ծառայողների միջին քանակը 1932 թ. յեղել է 93.996 հոգի: 1935 թ. յեղել է 101.165 հոգի: 1937 թվին՝ 111.178 հոգի: Յուրաքանչյուր բանվոր-ծառայողի միջին աշխատավարձը 1932 թ. յեղել է 1541 ոռորդի: 1935 թվին՝ 2.566 ոռորդ: 1937 թվին՝ 3.352 ոռորդ:

Նարկոմատների գծով բանվորների տարեկան միջին աշխատավարձն ունի հետևյալ պատկերը:

Ցեթե 1932 թվին տարեկան միջին աշխատավարձը յեղել է 6.691 ոռորդի, 1935 թվին՝ 9.091 ոռորդի, 1938 թ. յեղել է 13.109 ոռորդի, վորը 1932 թվի համեմատությամբ կազմում է 195,9%:

Այս թվերը խոսում են Լենինի—Ստալինի կուսակցության դեկավարությամբ ու խորհրդային իշխանության նորհիվ ստեղծված այնպիսի պայմանների մասին, վորոնք հատուկ են ու հնարավոր միայն Սոցիալիստական յերկրում: Այդպիսի յերեսությ անհասանելի ու անիրազործելի յե կապիտալիստական յերկրներում:

Դաշնակցության տիրապետության ժամանակ աշխատավարձի բարձրացման և բանվորների գրության լավացման հույսերը միանդամայն կտրված եյին: Այդ մասին ե վկայում Ալեքսանդրովլի աշխատանքի միհակադրական բաժնի 1919 թվի հուլիսի գեկուցադիրը, վորի մեջ ասված ե.

«Սովոր քայլքայել և վոչնչացրել ե ամեն ինչ:

Անորոշ և անապահով կյանքը թույլ չի տալիս ժողովրդին ստեղծագործ և արդյունարեր աշխատանքի դիմելու: Այսպիսի պայմաններում պաշտպանել և պահպանել այս ու այն որենքը, վորով ապահովված լինի բանվորի կյանքն ու ապագան, շատ գժվար ե... նույնիսկ գժվար և վորոշել բանվորի՝ ընդհանուր պետության համար նվազագույն վարձարությունը, քանի վոր որ-որի վրա փոփոխվում ե ու թանդանում և յերկրի տնտեսական կյանքը: Այսորվա բա-

վարությունը արդեմարձը, արդեմ անբավարար ե մի շաբաթից հետո»:

Միանդամայն հասկանալի յե, վոր դաշնակցական հրեշների ստեղծած անտանելի իրազրության մեջ որեցոր կյանքը դառնում եր անհօւսալի: Հայաստանը անցյալում մութ եր ու խավար, գյուղերն ու շննդերը լույս եյին ստանում ձեթի և սև նավթի ճրադներից, ելեկտրական լուսավորությունը հազվադյուն և շատ աննշան եր Հայաստանում: Միայն խորհրդային իշխանության տարբներին աշխատավորության կուլտուրական ու յերջանիկ կյանքն ավելի ծաղկուն դարձվեց իլիչյան լամպոչկաների պայծառ լույսով: Այսոր ելեկտրականության միջոցով վոչ միայն աշխատում են մեր գործարանները, հանքերը, արդյունաբերության, գյուղատնտեսության համապատասխան ձեռնարկությունները, այլև լուսավորված են մեր քաղաքներն ու շրջանների կենտրոնները, շատ ու շատ գյուղերն ու ավանները:

Այժմ XVIII կուսում համագումարի վրոշման հիման վրա կառուցվում են մի շարք փոքր ու միջակ ելեկտրոկայաններ: Այսպիսով մոտ ապագայում՝ Հայաստանի յեթե վոչ բոլոր գյուղերը, գոնե գյուղերի ճնշող մեծամասնությունը կտանան ելեկտրական լուսավորություն: Ելեկտրոնիերդիմայի կարողությունը համար և պատկառելի չափերի այսպես, որինակի,

1913 թվին՝ Հայաստանում յեղել է 10 ելեկտրոկայան, 1919 թ. մայիսել եր 7 ելեկտրոկայան, վորոնք տվել են 1,7 միլիոն կիլովատ եներգիա: 1938 թվին կար 45 ելեկտրոկայան, վորոնք յերկրին տալիս են վիթխարի կարողության ելեկտրոններգիա:

Այսպիսով իրականացվել ե մեծահանձար Վլադիմիր Իլյիշ Լենինի հանրահայտնի լոգունդը՝ «Խորհրդային իշխանություն պլյուս ելեկտրիֆիկացիա՝ հավասար ե սոցիալիզմ»:

Ստալինյան հնդամյակների տարբիներին ստեղծված

ձանը ինչուստրիայի չնորհիվ սացիալիզմի հաղթանակը անփետառքըն ապահովված է գյուղատնտեսության մեջ։ Ենչև խորհրդայնացումը Հայաստանի գյուղատնտեսությունը ժանր եր, գտնվում եր ցիրուցան, աղքատ ու փոշիացած վիճակում։ բոլոր լավ հողերը, հողերի 70%-ը դանվում եր պետության, կուլակների, վանքերի, յեկեղեցների ու զինվորական աստիճանավորների տրամադրության առակ։ Հողերի փոքր ու անպետք մասը, ընդամենը 30%-ը գտնվում եր ամբողջ աշխատավոր գյուղացիության ձևքին։ Արտաքրական միջոցներից զուրկ բարերակ ու չքաշուր գյուղացիները ընկնելով կուլակների ու վաշխառուների ծանր պարագերի տակ, սահմանաված եյին իրենց աննշան հողակառուը կամ արենգով տալ կամ ընդմիշտ վաճառել այդ առողությունն, ու ամեն ինչից զուրկ կամ գնում եյին արդյունաբերական վայրերի կամ տեղում կուլակների մոտ չընչին վարձատրությամբ քարշ եյին տալիս իրենց և իրենց ընտանիքների գառն ու չարքաջ որերը։

Մեր հանրապետության աշխատավոր գյուղացիությունը, հարեան հանրապետությունների գյուղացիության նմտն, իր փրկությունը գտավ Հոկտեմբերյան հեղափոխության լուսաւու ճառագայթների միջոցով։ Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության շարունակությունը հանդիսացող Նոյեմբերյան հեղափոխության չնորհիվ հայ ժողովուրդը, Հայաստանի աշխատավորությունը ունեցավ իր հարադար իշխանությունը, հողն ու իրավունքները։

Աշխատավոր գյուղացիությունը հող ունենալով հանգերծ, մինչույն եր, ժանր, ցիրուցան անտեսությամբ կարիքեց դուրս գալ չեր կարող, ունեոր ու յերջանիկ չեր կարող ապրել։ Գյուղատնտեսության մասին խոսելիս, տաշապոր մարդկության մտքի փարոս կենինը առում եր։

«Յերե մենք առաջա նման նստեն մանք տնտեսություններում, քեկուզ և փորպես ազատ բաղադրիներ ազատ հաջի վրա, միկնույն ե, մեզ անխուս-

փելի կորուս և սպանում» (Հատոր XX, էջ 417), և շաբունակում։

«Մանք տնտեսությամբ մարդ կարիքից չկրոգ դուրս գալ» (Հատոր XXIV, էջ 54). «Միայն քննիանուր, արտելային, ընկերային աշխատանքի ոգությամբ կարելի յե դուրս գալ այն փակուդոց, ուր ֆշել և մեզ իմպերիալիստական պատերազմը»։ (Հատոր XXIV, էջ 537)։

Անմոռանալի առաջնորդի գործի հավատարիմ ու անձնվեր շարունակող, աշխարհի աշխատավորության սիրելի, հայ ժողովրդի բարեկամ մեծ Ստալինի զեկալարությամբ հիմնվեցին և ստեղծվեցին կոլխոզային կարգեր։ Հանրապետության աշխատավոր գյուղացիությունը, մեր ընդարձակ հայրենիքի բազմամիլիոն դյուղացիության հետ միասին, հաստատ համոզված լինելով կոլխոզային կարգերի առավելությանը, վորակես իր ունեոր ու յերջանիկ կյանքի միակ ուղու, ընդզբակվեց կոլխոսնեսություններում։ Ահա թե ինչպես են աճել կոլեկտիվ տնտեսությունները, նրանց մեջ ընդզբակված տնտեսությունների թիվը և տոկոսը։

1927 թվին յեղել ե 6 կոլխոզ 346 գյուղական տնտեսությամբ։ 1928 թ. յեղել ե 54 կոլխոզ, 1.085 տնտեսություն, վորը կազմում եր 0,6%-ը։ 1932 թվին՝ 897 կոլխոզ, 67.097 տնտեսություն, վորը կազմում եր 39,9%-ը։ 1936 թվին՝ 1.071 կոլխոզ, 163.663 տնտեսություն, վորը կազմում եր 86,6%-ը։ 1939 թվին կա 1.078 կոլխոզ, 182.945 տնտեսություն, վորը կազմում ե 96,1%-ը, չհաշված վերջին ամիսներին նոր ընդունված տնտեսությունները։ Յեթե այդ ել գումարենք, կատացվի այն, վոր մենատնտեսները կկազմեն աճենանանշան մասը։ Տարեցտարի աճել և ցանքային դաշտերի և կուլտուրական մշտեկությունների տարածությունը։ այսպես, որինակ,

1913 թվի ցանքային տարածությունը յեղել ե 345.700

Հեկտ., ձնչող մեծամասնությունը հացահատիկային ցանքեր. 1919 թվին ցանքերի տարածությունն իջել է 82.700 հեկտարի, վորից հացահատիկ 78.400 հեկտար: 1928 թվին յեղել է 332 հազար հեկտար, վորից հացահատիկային 290 հազար 800 հեկտար: Այս տարի 438.900 հեկտար, վորից հացահատիկային 357.800 հեկտար. միանդամայն պարզ եռաբբերությունը: Բնորոշ ե այն, վոր ամբողջ վարելահողերի 0,4%-ը 1928 թվին, 92,6%-ը 1937 թվին, 97,6%-ը 1939 թվի 7-րդ ամսին գտնվում է կոլխոզների տրամադրության տակ: Այժմ միայն վարելահողերի 2,4%-ն է մնացել մենատնտեսներին: յեթև նկատի ունենանք 7-րդ ամսից մինչև 1939 թվի վերջը կոլխոզներում նոր ընդունված անտեսությունների վարելահողերի միացումը, հետևապես վարելահողերն ամբողջությամբ կլինեն կոլխոզների տրամադրության տակ: Կարեորն այն է, վոր բավական խոչը քանակությամբ հողեր դրված են կուլտուրական մշակույթների տակ:

Որինակ բամբակի ցանքերի տարածությունը՝ 1919 թվի համեմատությամբ, 1938 թվին աճել է 28,5 անգամ: Խաղողի այդի 1919 թվին յեղել է 4200 հեկտար, 1938 թվին՝ 14.200 հեկտար: Ծխախոտ 1919 թվին՝ 100 հեկտար, 1939 թվին՝ 3.500 հեկտար: Կարտոֆիլ 1919 թվին յեղել է 1800 հեկտար, 1939 թվին՝ 12.300 հեկտար և այլն:

Այս թվերը ցույց են տալիս, վոր մեր կուսակցությունն ու իշխանությունը վոչ միայն ուշադրություն են դարձնում ցանքերի տարածությունների լայնացման վրա, այլև կուրժան մշակույթների տարածությունների ընդարձակեցն վրա:

Սուպենյան հնդամյակների տարիներին գյուղատնտեսությունը լինթարկեց մեքենայացման. մեքենայացման յենթարկել վոչ միայն հասկավոր ցանքերի մշակույթը,

այլև կուլտուրական մշակույթների (բամբակի, ծխախոտի, ծակնդեղի, այդիների) տարածությունները: Անցյալի նախնադարյան հետամնաց գործիքները խոպառ վերացվել են գյուղատնտեսության միջից, վորոնց փոխարինել են գյուղատնտեսության ժամանակակից առաջավոր մեքենաները ու գործիքները, այնպիսի մեքենաներ, վորոնցից վորու քանակությամբ ունենալը կենինը Փանազիա յեր համարում:

Կոսելով գյուղատնտեսության մեքենայացման և միջակ գյուղացիությանը կոմունիզմի մեջ գրավելու մասին, Վ. Ի. Լենինը հետևյալն եր ասում:

«Միջակ գյուղացիությունը կոմունիստական հասարակության մեջ միայն այն ժամանակ մեր կողմը կիմի, յերբ մենք քերեացնենք ու բարելավենք նրա կյանքի տնտեսական պայմանները: Յերե մենք կարողանայինք վաղը տալ 100.000 առաջնակարգ տրակտոր, դրանք ապահովեյինք բենզինով, դրանք ապահովեյինք մեքենավարներով (դուք եկանալի գիտեք, վոր առաջմ սա Փանտազիա յե), ապա միջակ գյուղացին կասեր. «Յես կոմունիայի կողմն եմ» (այսինքն՝ կոմունիզմի կողմը): Բայց այդ տեսելու համար հարկավոր ե նախ կողմը: Բայց այդ տեսելու համար հարկավոր ե նախ հաղթել միջազգային բուրժուազիային, հարկավոր ե հարկադրել նրան, վոր տա մեզ այդ տրակտորները, կամ քե չե մեր արտադրողականությունը այնքան պետք ե բարձրացնել, վորպեսի մենք ինքներս կարողանեք դրանք հայրայրել: Միայն այս կերպ նիշտ դրված կիմի այդ հարցը»: (Հատոր XXIV, էջ 170):

Այս ժամանակվա Փանազիան այժմ իրականություն ե գործել գյուղատնտեսության մեջ. հարյուր-հազարավոր տրակտորներ, կոմբայններ, կալսիչներ և այլ տեսակի մեքենաներ ու գործիքներ արտադրվում են մեր սեփական յենթարկեցն առաջարկությունը: Միայն Հայաստանում գյուղատնտեսության մեջ 1938 թ. կար 1431 տրակտոր, 302 կալսիչ,

192 կոմբայն, 728 բեռնատար ավտոմեքենա և այլ մեքենաներ:

1939 թվին կա 32 ՄՏ կայան, վորոնք ունեն 1284 տրակտոր, 245 կոմբայն, 276 կալիչ, վորոնց ընդհանուր հզորությունը՝ վերածված ձիու ուժի՝ պատկառելի չափերի յեւ հասնում: Հստ 1938 թվի տվյալների՝ կոլխոզների 65,1%-ը սպասարկում են ՄՏ կայանները: Այժմ վարի, հերկի, հնձի, կալսելու խոշոր մասը կատարվում է մեքենաների միջոցով:

Խորհրդային իշխանության տարիներին ցանքերի տարածության լայնացման հետ միասին ավելացել է վոռոգելի տարածությունների չափը: 1919 թվին վոռոգվում եր 60.000 հեկտար, իսկ 1939 թ. վոռոգվեց 173.300 հեկտար: Միայն 1938—39 թվերին 9 շրջաններում կառուցվել եւ 27 ջրանցք, վորոնք վոռոգել են ահագին տարածություններ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո կառուցվել են՝ վաղարշապատի Հրանի Լենինի անվան ջրանցքը, վոռոգում և 1800 հեկտար. Շիրակի ջրանցքը, վոռոգում և 11.000 հեկտար. Այդը լճի սիստեմը՝ 5000 հեկտար. Սարդարապատի ջրանցքը՝ 7000 հեկտար, վերջացվելու վրա յեն ընկեր Ստալինի անվան ջրանցքի (Դոերի վոռոգման սիստեմի) աշխատանքները, վորը վոռոգելու յեւ 13.550 հեկտար տարածություն:

1940 թվին ավարտվելու յեն Յերևան—Աշտարակ, Բասարգչարի (Մազրա), Վաղարշապատի, Ղափանի, Կոտայքի, Ղամարուի, Սպիտակի և շատ ուրիշ ջրանցքները, վորոնց միջոցով վոռոգվելու յեն դարերից ի վեր անջուր մնացած հողամասեր: Դրանք դառնալու յեն ինչպես հացատիկի, նույնպես և բամբակի, ծխախոտի, ճակնդեղի, կարտոֆիլի, մրգատու այդիների բերքառատ դաշտեր, մեր աշխատավորության համար լիառատ յեկամտարեր որյեկտներ: Գյուղատնտեսության մեքենավորման, ըբալի տարա-

ծությունների ավելացման ու մեր աշխատանքը կոլխոզներիների քրտնաջան աշխատանքի չնորհիվ՝ մեծ չափերի յեւ հասել բամբակի, խաղողի, ծխախոտի, հացահատիկի, կտրտովիլի և այլ կուտուրանների բերքառավորթյունը: Այսպիս, որինակի,

1919 թվին հացահատիկի միջին բերքը յեղել է 4,1 ցենտներ: 1928 թվին՝ 4,6 ցենտներ, 1937 թվին՝ 9,2 ցենտներ: Բոլոր ավյալները կան, վոր այս տարի նույնակեն բերքատվությունը ավելին բարձր ել լինելու: Բերքառավորթյան բարձրացման հետևանքով տարեցտարի աճել է կոլխոզների յեկամուտը: Յևթե 1936 թվին կոլխոզների համախառն յեկամուտը կազմում եր 175 միլիոն 96 հազար 300 ռուբլի, 1938 թվին համար 234 միլիոն 571 հազար ռուբլու: 1936 թվին մեկ կոլխոնտեսականի համախառն յեկամուտը կազմում եր 1108 ռուբլի, 1938 թվին այն կազմում եր 1356 ռուբլի:

Տարեցտարի աճում է միլիոնատեր կոլխոզների թիվը: 1936 թ. յեղել ե այդպիսի 18 կոլխոզ, 1937 թվին՝ 20 կոլխոզ, 1938 թվին՝ 41 կոլխոզ: Բոլոր ավյալներն առում են այն մասին, վոր այս տարի միլիոնատեր կոլխոզների թիվը մի քանի անգամ ավելի լինի: Ահա միլիոնատեր կոլխոզներից մի քանիսը:

Համարլուի շրջանի՝ Նորաշեն, Արտաշատ, Դարդալու, Նովրուզլու, Այգեստան, Ցուլվա, Բեջջազլու, Նա Համարլու, Բուրաստան, Դալար և շատ ուրիշ գյուղերի կոլխոզները:

Հոկտեմբերյանի շրջանի՝ Հոկտեմբերյան, Գեջրլու, Սովետական, Բամբակաշատ, Կուզիդիզան, Արմավիր, Ս. Շահրիար, Փ. Շահրիար և այլ գյուղերի կոլխոզները:

Վաղարշապատի շրջանի՝ «Անսատված», Փարաքար, Վաղարշապատ, Արշալույս, Այնալու, Խաթունարիս, Սամազար և այլ գյուղերի կոլխոզները:

Զանգիբարաստի շրջանի՝ Զանգիբարաստ, Զանգիբար, Թաղադրություն:

Աշտարակի շրջանի՝ Աշտարակ, Վոսկելյաղ, Ռշմական:
Վեդիի շրջանի՝ Արարատ, Ռեհանլու:
Կալինինյի շրջանի՝ Կալինինո և այլ գյուղերի կոլխոզ-
ներ:

Մեր հանրապետության միլիոնատեր և մնացած կոլխոզ-ները խոչոր աշխատանք կատարեցին Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի պահանջները լրացնելու ուղղությամբ: 1939 թվին ցուցահանդեսին մասնակցել են 170 կոլխոզներ, 5 սովորողներ: Խնչակես հացահատիկի, բամբակի, ծխախոտի, այդիների, կարտոֆիլի, խոտաբույսերի բերքատվությունը բարձրացնող, անասնապահությունը զարգացնող, նույնական և բերքահավաքը, վարը, ցելը բարձր ցուցանիշներով կատարող տրակտորիստ, կոմբայնավար ու մասնագետ ստախանովականներից և հարվածայիններից՝ 1939 թվի ցուցահանդեսին մասնակցել են 2862 հոգի: 1940 թվի համար ամենուրեք ստացվում են գիմումներ:

Այս փաստերը ցույց են տալիս, վոր մեր կոլխոզներն ու կոլխոզնիկները տողորված են բոլոր տեսակի կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու, անասնապահությունը զարգացնելու, մեր հայրենիքն ավելի հզորացնելու և անառիկ դարձնելու բուռն ցանկությամբ: Այդպիսի ցանկությունները զորդի վերածելու արդյունքն է, վոր մեր կոլխոզնիկների յեկամուտները չեն սնված չափերի յեն հասում: Որինակ՝ Վաղարշապատի շրջանի «Անսասոված» կոլխոզի անդամ, նախկին բատրակ Պետրոս Ասլանյանը իր ընտանիքով այս տարի վաստակել է 1040 աշխոր, վորի գիշաց ստանալու յե 18729 ոուրի միայն դրամ, 1500 կիլո հացահատիկ, 312 կիլո խաղող, 820 լիտր շիրա, 240 լիտր գինի, 173 լիտր ողի:

Նույն կոլխոզի անդամ, նախկին ծայրահեղ չքավոր Արտաշես Լազարյանը այս տարի ընտանիքով վաստակել է 820 աշխոր, վորի գիմաց ստանալու յե 14436 ոուրի միայն

դրամ, 1200 կիլո հացահատիկ, 240 կիլո խաղող, 605 լիտր շիրա, 230 լիտր գինի, 137 լիտր ողի, չհաշված իր անհնական տնամերձից ստացվածը:

Դամարլուի շրջանի Գյողակլու գյուղի կոլխոզի անդամ Հարուրյուն Ստեփանյանը միայն ինքը 1938 թվին վաստակել է 389 աշխոր, վորի գիմաց ստացել է միայն դրամ 7556 ոուրի, խաղող 1600 կիլո, չոր միագ 40 կիլո և այլ մթերքներ: 1939 թվին մասնակցել ե գյուղատնտեսական ցուցահանդեսին:

Զանգիբարասարի շրջանի Քյալարա գյուղի կոլխոզի անդամ Վարդգես Սիմոնյանը միայն ինքը 1938 թվին վաստակել է 420 աշխոր, վորի գիմաց ստացել է 4620 ոուր. դրամ, 210 կիլո հացահատիկ, 294 կիլո բրինձ և այլ մթերքներ, մասնակցել ե գյուղատնտեսական ցուցահանդեսին:

Դամարլուի շրջանի Արտաշատ գյուղի կոլխոզիկ Գուրգեն Յեղիկարյանը 1938 թվին միայն ինքը վաստակել է 295 աշխոր, ստացել է 3304 ոուրի միայն դրամ, 1032 կիլո հացահատիկ, 150 կիլո խաղող, 295 լիտր գինի, 30 լիտր ողի և այլ մթերքներ:

Հոկտեմբերյանի շրջանի Սովետական գյուղի կոլխոզի անդամ Սարգիս Հակոբյանը 1938 թվին միայն ինքը վաստակել է 576 աշխոր, ստացել է դրամ 7298 ոուրի, 462 կիլո հացահատիկ և այլ մթերքներ:

Այսպիսի կոլխոզնիկների թիվը շատ-շատ է մեր գաշտային, նախալեռնային ու լեռնային շրջաններում: Հենց դա ել նշանակում է մտավոր և Փիղիկական աշխատանքի տարբերության վերացում, գա նշանակում և ունեսոր ու կուլտուրական կյանքով ազրել: Նախկին ընչագուրի հազարավոր գոր գյուղացիներ կոլխոզային կարգերի չնորհիվ ազրում են բերկարալից կյանքով, չատ կոլխոզնիկներ ունեն փախուկ ժահճականներ, պատեփոն, ուղիումնիկ, կարի մեքենա, բուֆետ, շիֆոներկա և այլ տեսակի հահկարասիք:

Այդ բոլորի, մեր ուրախ ու յերջանէկ կյանքի համար պարտական ենք մեր մայր կուսակցությանը, մեր սիրելի Սուալիինին:

Ժողովրդի թշնամիների, աջ-տրոցկիստական-բուխարինական-դաշնակցական բուրժուանացիոնալիստական իժերին ջախջախելու հետ միասին ձեռնարկվեց վնասարարության ձեռևանքների վիկվիդացիան և վերջին յերկու տարվա ընթացքում ժողովունեսության բոլոր բնագավառների, հատկապես գյուղատնտեսության և անասնապահության զարգումը կատարվեց խոչոր հաջողությամբ:

Խոչոր չափով աճել ե անասնապահությունը. 1932 թվին խոչոր յեղջյուրավոր անասուն ընդամենը յեղել է 685.400 հատ, 1939 թվին՝ 755.400 հատ. Վոչխար 1932 թվին յեղել է 848.400 հատ, 1939 թվին այլ քանակը հասել է մեկ միլիոն 290.400 հատի. Կոլխոզներում ավելացել ե Փերմաների թիվը, որինակ՝

Փերմաների անունները	1932 թ.	1936 թ.	1938 թ.	1939 թ.
Կովարուծական . . .	116	598	605	971
Վաշխարաբուծական . . .	114	492	546	875
Խոզաբուծական . . .	32	113	190	315
Զիարուծական . . .	6	166	227	494
Այլն	—	336	412	63
Բնդամենը . . .	268	1.720	218	2.718

Այս թվերը ցույց են տալիս մեր սոցիալիստական գյուղամ անասնապահության զարգացման տեմպը, կոլխոզների ապրանքային Փերմաների անասունների գլխաքանակի ավելացումը: Պարզ է, վոր կոլխոզներում յեղած հանրային խոչոր յեղջյուրավոր անասունների, ձիերի, խոզերի, վոչխարների խոչոր մասը գտնվում է Փերմաներում, ինչպես նաև անասնապահական խորհրդային տնտեսություններում: Ան-

սունների վարոշ մասը գտնվում է կոլխոզնիկների և աննշան մասը մենատնտեսների ձևորում:

Մեր կուսակցության X VIII համագումարի վորոշումների ճշգրիտ իրագործումը դարձել է Հայաստանի կուսակցական և անկուսակցական բոլշևիկների պատվի գործը: Բացի խոչոր ու մանր յեղջյուրավոր անասունների գլխաքանակի ավելացումից, պայքարը տարրում և անասունների ցեղի ազնվացման, կաթնա-մսա-բրդատվության բարձրացման ուղղությամբ: Մասսայական յերկույթ և դարձել կոլերի, ձիերի, վոչխարների մետխացումը:

Թալինի շրջանի Աղյաման գյուղի կոլխոզի վոչխարաբուծական Փերման ամբողջապես յնթարկվել է մետխացման, չունենալով վոչ մի կորուստ: Ավելացել ե կաթնաբրդատվությունը. Փերմայի վարիչ՝ աշխատանքի հերոս Սրապ Գրիգորյանի չորրհիվ ն. Բայազետի շրջանի Աղջիբերի վոչխարաբուծական Փերման այս տարի 315 վոչխար լրիվ յենթարկել ե մետխացման (ոամբուլյա ցեղով): Ռամբուլյա վոչխարների բրդատվությունը այնքան բարձր է, վոր այդ կոլխոզը բրդի պետական պլանները կատարելուց դատ, 220 կիլո բուրդ ազատ մթերման կարգով հանձնել և պետությանը: Այդ տեսակի վոչխարների մի խոյց ստացել է 10 կիլո բուրդ, պետական գններով այդ մեկ խոյցի բրդի արժեքը կազմել է 270 ռ.: Ֆերման չի ունեցել վոչ մի կորուստ, ընդհակառակը 220 վոչխարից ստացել է 235 դատ: Փերմայի շրջակական Աղյամանին և կոլխոզի նախագահ՝ Հայկարիչ՝ Շուքյուր Աղյամանին և կոլխոզի նախագահ՝ Հակոբի Հովհաննեսը աշխատում են, վորակեազի 1940 թվին Փերման մասնակցի գյուղատնտեսական ցուցահանդեսին:

Այդպիսի կոլխոզների Փերմաների քանակը հանրապետության մեջ մեծ չափերի յե հասնում, վորոնց առաջավոր անասնապահները բոլշևիկներն պայքարում են անթերի կատարելու X VIII կուս: Համագումարի պատմական վորոշումները:

Այս տարվա լիտուան բերքից հաջողությամբ կտարրվել են մթերումների պետք պարտավորությունները: Բամբակացան, ծխախոտագործ ու այգեգործ շրջանների կուտակցական և անկուտակցական բոլշևիկները վոչ միայն պայքարում են ցանքերի տարածությունը մեծացնելու, բերքատվությունը բարձրացնելու, այլ և պետությանը ժամանակին, վորակով ու մեծ քանակությամբ մթերքներ հանձնելու համար: Մեր բամբակացան ու այգեգործ շրջանները ինչպես անցյալ, նույնպես և այս տարի պետությանը հանձնեցին բարձր վորակով բամբակ, խազող ու այգեպատուղներ: Այդ նույն բանը կատարվում է ծխախոտի, հացահատիկի, կարտոֆիլի և այլ մթերքների նկատմամբ: Հոկտեմբերյանի ուղանի կուտակցական և անկուտակցական բոլշևիկները պայքարում են ստենայեկամտարեր կուլտուրայի՝ «դերանի» ցանքերի տարածությունը լայնացնելու համար, մի կուտուրա, վորի մշակման համար տեղում կառուցվում է գործարան՝ ստացված բերքը մշակելու համար:

19 տարիների ընթացքում չտեսնված տեմպերով ե աճել Հայաստանի ժողովրդական լուսավորությունը: Մեր կուտակցությունն ու իշխանություննը բոլոր տեսակի պայմաններ ստեղծել են մեր աշխատավորությանը և մատաղ սերնդին կոմունիզմի վողով դաստիարակելու համար: Բավական ենչել, վոր 1933 թից մինչև 1938 թիվը կառուցված ե 369 դպրոց, վորից 51-ը քաղաքներում, 318-ը շրջաններում, չհաշված անցյալում յեղած և այս տարվա կառուցվածները: Միայն 1939—40 ուսումնական տարում՝ պետական և տեղական բյուջեներից 142 միլիոն 412 հազար 300 ռուբի հատկացված է ժողովրդական լուսավորությանը, վորն անցյալ տարվա համեմատությամբ տալիս ե 19,5% աճ: Այս գումարի հաշվին մեր Հանրապետության մեջ գործող 1159 դպրոցներում սովորում են 296 հազար յերեխաներ, ԲՈՒՀ-երում և տեխնիկումներում՝ 11000, ման-

կատաներում՝ 1·400, մանկապարտեղներում 8000, մեծահասակների դպրոցներում (ներառյալ նաև անդրադեմների ու կիսադրագետների դպրոցներում) 83000, ուսուցիչների վերապատրաստման կուրսերում՝ 16000: Ընդամենը մեր Հանրապետության մեջ սովորում են 401 հազար մարդ, վորը կազմում է Հայաստանի ազգաբնակչության 33%-ը: Նշված գումարի հաշվին կառուցվում են՝ 82 նոր դպրոցներ, բացվում են գյուղերում՝ 406 խրճիթ-ընթերցարաններ, քաղլուսհիմնարկներ, գրադարաններ և այլն:

Դաշնակցության տիրապետության տարիներին Հայաստանում չեն յեղել ԲՈՒՀ-եր և տեխնիկումներ: 1927—28 թ. թ. յեղել ե 3 ԲՈՒՀ 1640 ուսանողներով, 12 տեխնիկում 1676 ուսանողներով: 1938—39 ուս. տարում կար 8 ԲՈՒՀ 5696 ուսանողներով, 63 տեխնիկում 10·433 ուսանողներով:

Այժմս Հայաստանում գաւավանդում են 10·564 դպրոցներ և ուսուցիչներ, վորոնք մեր յերիտասարդությանը և յերեխաներին կրթում են կոմունիզմի վողով: Դրանք ժողովրդական կրթության պատվավոր դործը կատարում են բարձր պատասխանատվությամբ: Նրանցից 54 հոգի այս տարի պարզեատրվեցին ԽՍՀՄ-ի շքանշաններով:

Խորհրդային հզոր կառավարությունը ամեն տեսակի նյութական, կուլտուրական պայմաններ ստեղծել ե մեր ժողովրդական կրթության հրամանատարների համար:

Դաշնակցական հրեները ինչպես սոսկալի պայմաններ ստեղծել ենին Հայաստանի ժողովնեսության բոլոր բնագավառներում, նույնպես և կրթության բնագավառում աշխատաղների համար: այն ժամանակավայրում աղքատիկ ու սոսածաղբանքի յենթակա վարժապետները աղքատիկ ու սոսածաղբանքի վայրմաններում ելին ապրում: Այդ մասին է կալի վատ պայմաններում ելին ապրում: Այդ մասին է վկայում 1920 փետրվարի 7-ի բողոքը՝ ուղղված Հայաստանի լուսավորության նախարար պ. Նիկողայաս Աղբալյանին, վորի մեջ առված ե.

«Եղմիածնի Ամերիկյան վորքանոցների Վարչության կարգադրության համաձայն մեզ երաժարված եռմարեցին մեր պաշտոնից, մինչդեռ մենք գրավոր երավիրված ենք մինչև 20 քվի ոգոստոսի 31-ը։ Ամերիկյան վորքանոցների Վարչության այդորինակ ժայլը գտնելով միանգամայն անարդարացի և մի անողոք դատավճիռ մեր և մեր ընտանիքների նկատմամբ։

Մենք՝ ներքո ստորագրողներս դիմելով Զեզ, խընդուում ենք նկատի ունենամք 1) մեր ձեռքի տակ սովորող մատապ սերնդի դաստիարակության գործը, վոր անշուշտ տուժելու յե այս պարագայում։ 2) Մեր և մեր ընտանիքների համար ստեղծված նյութական սոսկալի ծանր դրությունը։ 3) Մենք տարեկեսին արձակված լինելով պաշտօնից, վոչ մի տեղ հույս չկա աշխատանքի ընդունվելու։ Խնդրում ենք ըստ պայմանագրի, մեզ քողնեք մեր պաշտոնում մինչև 20 քվի ոգոստոսի 31-ը, վորից հետո տեսնենք ինչ կինքի կտարյուներ։

Դիմողներ՝

1. Լուսիկ Ճուղարյան
2. Արշանուշ Հովսեփյան
3. Մարգարիկ Գարբիելյան
4. Մարգարիտ Տեր-Գրիգորյան և այլն։

Դիմողները ինչքան ել բողոքելին, միւնույն եր, չելին դանի աշխատանք, իրավունք, լավ նյութական պայմաններ։ Այդ նրանց տվեց Նոյեմբերյան պանծալի հեղափոխությունը, զոր ու անպարտելի Կարմիր բանակը։

Անցյալի համատարած անըլրազնությանը գուրել եր թերթերց, ժուռնալներից, գրքերից, բրոշյուրներից, որանց փոխարեն անարգել գործուած եյին դաշնակցական լողիք մեծ ու ժուռ աստիճանագրություների մուրակը, տերտեր-

ների ու հոգեսոր «Հայրերի» բժամիտ ու խավարամուլ քարոզները։

Խորհրդային իշխանության տարիներին լույս են տեսնուած կենտրոնական 10 անուն թերթեր, վորից՝ 7 Հայկական, 2 ռուսական, 1 աղբբեջանական։ 1936 թվին լույս տեսած 36 անուն թերթերի փոխարեն այժմ լույս ե տեսնուած 50 անուն թերթ և 8 անուն ժուռնալ տարեկան ավելի քան 45 միլիոն ընդհանուր տիրաժով։

Լույս են տեսնուած բաղմատիրաժ պատի թերթեր՝ կոլխոզներում, գործարաններում։ 1938 թվին գործուած եյին 180 շարժական կինոներ, 177 կոլխոզային ակումբներ, 5 կուլտուրայի և հանդստի պարկեր։

Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, մեծ Ստալինի Հայրական հոգատարությամբ ծաղկել ե Հայաստանի ձեռով աղդային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Խորհրդային հայ գորդները, գրամատուրգները, կոմպոզիտորները, նկարիչները, յերաժշտագետները, նվազողները, Խորհրդային Հայաստանի յերիտասարդ կադրերը կենդանացրել են հայ ժողովրդի տարիներ շարունակ ստեղծած կուլտուրան, արվեստը, գրականությունը, յերգը, յերաժշտությունը և այլն։

Ցարիզմի ու Դաշնակցության կողմից քայլայված, ավերված Հայաստանում՝ կուլտուրայի արվեստի մասին խոսելն ավելորդ եր։ Անցյալում Հայաստանում, նույնիսկ նաև Յերևան քաղաքում, չի յեղել վոչ թատրոն և վոչ ել կինո։ Այդ մասին ե վկայուած դաշնակցական հանրային կրթության և արվեստի նախարարի 1920 թվի որինակիցը՝ ուղղված նախարարների խորհրդին, վորուած առաջ։

«Մեր մայրաքաղաքը շատ աղքատ և կուլտուրական նշանակություն ունեցող կրթիչ հաստատություններով, առանձնապես զգալի յե թատրոնի բացակայությունը։ Նախարարությունն մտադիր ե այս աշնանից ստեղծել այնպիսի պայմաններ, վոր հնարավոր

լինի Յերեանում ունենալ մշտական դերասանական խոռքը, վորը կծառայեր թե՝ մտավորական և թե հասարակ ժողովրդի պետքերին։ Այդ նազատակի իրագործման համար հարկավոր ե ունենալ առանձին հարժարեցրած շենք, վորի դահլիճը հնարավոր լինի վերածել բեմի։ Նախարարությունս նկատի ունի պառլամենտի կողմից այժմս բռնված շենքը։

Հանրային կրթության արվեստի նախարար

(Ստորագրություն)։

(Պետարկիվ, գործ № 201, էջ 179)։

Միանդամայն պարզ ե, մեկնաբանության կարիք չկա, վոր Յերեան քաղաքը զուրկ եր թատրոնի շենքից, մշտական դերասանական խմբից։ Այժմս Յերեանում կան Պետական թատերական, Ողերայի ու Բալետի 5 խոշոր և հարժար շենքեր իրենց մշտական և հիանալի դերասաններով։ Յերեվանում գործում են Ռուսական և Աղբբեջանական Պետական թատրոններ։ Այժմս Հայաստանում գործում են կենտրոնական ու շրջանային 25 թատրոններ՝ հայկական, ռուսական, աղբբեջանական և Խորհրդային Միության մեջ միակ՝ Ալագյարի շրջանի քրդական թատրոնը։

Հայաստանի թատրոններից աչքի յեն ընկնում Յերեանի Սունդուկյանի անվան կարմրադրու թատրոնը, Սպենդիարյանի անվան ողերայի և բալետի թատրոնը, Լենինականի և շատ ուրիշ թատրոնները, վորոնք տվել են մի շարք հրաշլի ներկայացումներ։

Հայաստանում գործում են՝ 250 ինքնակործ խմբակներ, 250 յերաժշտական-լարային, 103 պարի, 12 յերգի և պարի, 40 յերգեցիկ, 30 ժանդոլինիստների, 50 փողային, 3 ջազի նվագախմբեր և 3 աշուղական անսամբլներ։

Հայաստանի արվեստի՝ վերջերս Մոսկվայում տեղի ունեցած տասնորյակը ցույց տվեց, վոր Հայաստանի կուլտուրան և արվեստը հասցված են բարձր աստիճանի։ Մոսկ-

վայի Անմինի շքանշանակիր Պետական մեծ թատրոնի բեմի վրա տաղանդավոր հայ ժողովրդի՝ կուլտուրայի ու արվեստի վարպետները հիմակալի կերպով ցուցադրեցին Սովորդիալովի «Ալմաստ», Հ. Ստեփանյանի «Լուսաբացին», Ա. Տիգրանյանի «Անուշ» ուղերաները, հայկական առաջին «Յերջանիկություն» բալետը, վորը գրել և կոմպոզիտոր Ա. Խաչատրյանը։

Ոպերային և բալետի ներկայացումներ արվեցին յերկուական անգամ և ամեն անգամ մաքնակիցների պահանջով կրկնվեցին մի քանի յելույթները, բոլոր ներկայացումները արժանացան մոսկվացիների բուռն ու խանդավառ վերաբերմունքին։ Տասնորյակը յեղրափակվեց՝ ժողովրդական գործիքների անսամբլի, հայկական աշուղական յերգի անսամբլի, ժողովրդական յերգի ու պարի անսամբլի, Պետական յերգեցիկ կապելլայի, Զագ-որկեստրի՝ Հայկական ԽՍՀ վաստակավոր անսամբլի, Ա. Ա. Սպենդիարյովի անդան թատրոնի սիմֆոնիկ որկեստրի, Հայկական Պետական Հայֆիլհարմոնիայի սոլիստների յելույթներով։

Ինչպես ողերայի և բալետի ներկայացումներին, նույնպես և տասնորյակի յեղրափակիչ համերգին, վորոնք հանդիսացան ազգային կուլտուրայի ծաղկման վառ ցուցադրումը, շարունակ ներկա եյին ընկեր Ստալինը և նրա հավատարիմ զինակիցները։

Հայ ժողովրդի ստեղծագործական արվեստի և նրա կատարողների մասին Համեկուստի կենտրոնի որդան «Գրագուգան» իր հոկտեմբերի 20-ի առաջնօրդողում հետեւյալ գնահատականն և տալիս։

«Ակադեմիական կլինիկ փորձել այստեղ քվարկելու հայկական արվեստի բոլոր փայլուն վարպետներին։ Նրանք շատ են և որեցոր դառնում են ավելի ու ավելի շատ։ Խորհրդային Հայաստանի ծաղկութեան իրու վոր հոյակապ ե։ Մեծ Խորհրդային Միավորացին

բոլոր հաճրապետությունները հպարտանում են իրենց հիմնալի բույրը Հայաստանով։

Փառք հայ ժողովրդին, փառք նրա մեծ արվեստին, փառք ու վողույն Հայաստանի արվեստի աշխատավորներին»։

Հայ ժողովուրդը լի յե խոր յերախտագիտության զգացմունքով դեպի արդ հաղթանակների վոգեչնչող ու զեկավարող մեծ Ստալինը, վորի հայրական ձեռքը յերկիրը հասցեց յերջանկության։

Լենինյան-ստալինյան ազգային ճիշտ քաղաքականության, սիրելի Ստալինի հայրական հոգատարության արդյունքն և հայ ժողովրդի և Հայաստանի կուլտուրայի ու արվեստի այդ աստիճան ծաղկման գործը։ Մեր սրանձալի կուսակցությունն ու Խորհրդային հզոր պետությունը ինչպես բոլոր ազգային փոքրամասնությունների, նույնպես և հայ ժողովրդի կուլտուրայի ու արվեստի զարգացման համար խոչը պայմաններ ու հնարախորություններ են ստեղծել ու ստեղծում, ստալինյան հոգատարությամբ են գնահատվում կաղըերը։ Այդ բանի փայլուն ապացույցն ե՝ տասնորյակի մասնակիցներին կուսակցության զեկավարների կողմից Կրեմլում ընդունելը, նրանցից 134 հոգու ԽՍՀՄ-ի շքանշաններով պարզեատրելը, արվեստի աշխատողների համար բնակելի շենք կառուցելու նպատակով 2 միլիոն ոռութի, հայկական կոնսերվատորիայի շենք կառուցելու համատական 4 միլիոն ոռութի հատկացնելը, տասնորյակի բոլոր մասնակիցներին յերկու ամսվա աշխատավարձով սղարդեատրելը և այլն։

Ահա թե ինչպես են գնահատվում կուլտուրան, արվեստը և նրա փայլուն կատարողները։ Հայաստանի աշխատավորությունը տասնորյակի մասնակիցներին բարձր խանդավառությամբ ճանապարհեց դեպի մեր անծայրածիր հայրենիքի մայրաքաղաքը՝ Մոսկվա, մեծ հետաքրքրությամբ եր հետեւմ տասնորյակի ընթացքին, մեր արվեստի փայ-

լուն կատարողներին։ Մայրաքաղաքի աշխատավորությունը բուռն ցնությամբ գիմալզորեց տասնորյակի Մոսկվայից վերադարձ մասնակիցներին, վորոնք կուսակցության ու կառավարության արժանի գնահատականին, Մոսկվայի աշխատավորության սիրո և հարգանքին արժանացած, վերադարձան։

Լենինի շքանշանով պարզեատրված Հայկանուշ Դանիելյանը և ուրիշները իրենց յերությներում խորը յերախտադիտության զգացմունքով նշեցին մեր կառավարության ու սիրելի Ստալինի կողմից ստեղծված այն խոչը հնարավորություններն ու հոգատարությունը, վորի շնորհիվ կուլտուրան և արվեստը հասցեկել ե այդպիսի բարձր աստիճանի, նշեցին Մոսկվայի աշխատավորության սիրալիք վերաբերմունքը հանգեց հանգեց հայ ժողովրդի՝ հանձինս նրա արվեստի աշխատողների։

Ընկ. Դանիելյանը և ուրիշները տասնորյակի ընթացքում ձեռք բերած հաջողությունները շատ իրավամբ համարեցին Հայկոմկոմի ու անձամբ ընկ. Հարությունյանի ամենորյա ողնության ու զեկավարության արդյունքը։

Մի ամիս առաջ խորհրդային բոլոր ժողովուրդները տոնեցին Սաստացի Դավիթի հաղարամյակը։ Հաղարամյակին նկիրված զրականությունը լույս տեսավ հարյուր-հազարավոր որինակներով, թարգմանված ԽՍՀՄ-ի ժողոզարավոր որդիների լեզուներով, և տարածվեց մի քանի որ վուրդների լեզուներով, այդ տօնը հանդիսացավ ստեղծագործ ու վա ընթացքում։ այդ տօնը հանդիսացավ ստեղծագործ ու տաղանդավոր հայ ժողովրդի կեղեքիցների ու հարստահայողների դեմ մի քանի հարյուրամյակների ընթացքում շաբողների դեմ մի քանի հարյուրամյակների ընթացքում շաբողների հայ ժողովրդի հավերժացումը։ Այս յերկու որինակները հայ ժողովրդի հերոսական պայքարի ու ստեղծագործական մասնակիցների ցուցադրումն են։ Ահա ինչու լայնածավալ Խորհրդային յերկը բազմազգ և բազմամյիլոն ժողովուրդներն այդքան մեծ հետաքրքրությամբ ու հըմ-

վանքով՝ ղիմալորեցին ինչպես Սասունցի Դավիթի 1000-ամյակը, նույնպես և Հայկական արվեստի տասնորյակը։ Ռւբախ ու յերջանիկ հայ ժողովրդի և Հայաստանի աշխատավորության մեկ միլիոն 281 հազար 600 հոգուց՝ 561.600 հոգին խորհրդային իշխանության լուսապայծառ տարիների ծնունդն են, վորոնք փարթամ կերպով աճում ու սովորում են, վորոնք չեն տեսել ցարիզմի ու դաշնակցական կողոպտիչների հրեշտակոր գործերը 1919—20 թվերին և այն, թե ինչ դրության մեջ եյին իրենց ծնողները։ Այդ թվերի ազգաբնակության աճման մասին խոսել չարժի, այդ ժամանակ մարդիկ կոտորվում և մահանում եյին և վոչ աճում։ Սակայն 1913 թվի համեմատությամբ՝ 19 տարիների աճը ուկարդային է։ 1913 թվին յուրաքանչյուր 1000 հոգուն ծնունդ լինում եր 34 մարդ, մահանում եյին 18, աճում եր 16 հոգի։ 1936 թ. ծնվում եյին 42, մահանում 14, աճում եր 28 հոգի։ 1938 թվին ծնվում եյին 44, մահանում 13, աճում եր 31 հոգի։ 1939 թ. հունվարի մարդահամարից հետո մինչև հոկտեմբեր ամիսն ազգաբնակությունն աճել և մոտ 28.000 հոգով, 1913 թվի հետ համեմատած, այժմ ավագույն չափերի յի հասնում մահացությունը։

Այս թվերը ցույց են տալիս մեր աշխատավորության նյութական ու կուտուրական լավագույն պայմանները։ 1914 թվի 17 բուժական հաստատությունների փոխարեն Հայաստանում 1938 թ. գործում են 64 բուժ. հիմնարկություն 2.727 մահճակալներով, այդ թվում կան 12 ծննդյան տներ 442 մահճակալներով։ Գործում են 8 հատ կոլխոզային ծննդյան տներ 45 մահճակալներով, հակամալարիային կետեր 36 հատ, սեղոնային և մշտական մանկարուեներ 624 հատ, վորտեղ ընդգրկված են 13.932 յերեխաներ։

Այժմս գործող յերկու սանատորիաները իրենց 449 մահճակալներով մինչև 1939 թ. հոկտեմբերի 15-ը սպասարկել են 1.485 հիվանդի և 9 հանդստյան տները, 1061 մահճակալ-

ներով, սպասարկում են տարեկան մեծ քանակությամբ հանձնատարածությամբ հանձնագողների։ Այս բոլոր միջոցները նպաստում են մեր յերջանիկ ժողովրդի ավելի առողջ լինելուն, և մահացությունն իջեցված և նվազագույն չափի։

Կառավարության վորոշումները՝ աբորտն աբգելելու, բազմազավակ մայրերին նպաստ տալու մասին նույնպես խոչոր խթան հանդիսացան ազգաբնակության աճման գործում։ 1938 թվին նպաստ ստացող բազմազավակ մայրերի թիվը կազմում եր 3.110 հոգի։ Նրանք պետություննեց ստացել են՝ 1938 թվին 15.540.000 ոռուբլի։ 1939 թվին նոյեմբերի 1-ին 2.870 հոգի եյին, վորոնք ստացել են 16.007.000 ոռուբլի։

Ժողկոմխորհն ամեն որ ստանում և մի քանի տասնյակ վորոշումներ բազմազավակ մայրերին նպաստ տալու մասին։ Հանրապետության մեջ մի քանի հարյուրների յե համում 8—9—10—11 և ավելի յերեխա ունեցող մայրերի թիվը, վորոնք պետություննեց ստանում են տարեկան 2-ից—5 հազ. ոռուբլի և դեռ ավելի գումար։ Այդպիսով մեր յերջանիկ և ռւբախ մայրերը հայրենիքին տալիս են առողջ ու կենութափ մանուկներ։

Խոչոր չափերի յեն համում Սոցականվության ժողկոմատի այն գումարները, վոր տրվում են հաշմանդամներին, ծերերին, հիվանդներին, մանկատներին, հոգերուժական հիմնարկներին, սանատորիաներին, տրախոմայի, մալարիայի դեմ պայքարելու բուժհիմնարկներին. այլ տեսակի ծախսեր 1938 թվին յեղել են 11 միլիոն 594 հազար 600 ոռուբլի, իսկ 1939 թ. 13 միլիոն 400 հազ. ոռուբլի, չաշված տեղական բյուջեյով հատկացված ծախսերը։

Մեր կուսակցության ամենորյա հոգատարության արդյունքն ե բնակարանային ու կոմունալ շինարարության հսկա տեմպերով ծավալումը։ Յեթե 1932 թվին կար պետա-

կան ռնակարանային ֆոնդում 271.594 քառ. մետր տարածություն, ապա 1938 թ. կար 430.220 քառ. մետր տարածություն, իսկ 1939 թվին ավելի խոչոր չափերի յեհասել այս:

Հանրապետության մեջ, առանց Յերևան քաղաքի, կառուցված և՝ 32 հյուրանոց, 90 հանրակացարան, 27 բաղնիք, 14 ջրմուղ, բնակելի շենքեր 74.577 քառ. մետր: Այս թվերը ցուցյ են տալիս, վոր մեր շրջանների շինարարությունը կատարվում է աննախընթաց թափով:

Բոլոր շրջաններում, առանց բացառության, մեր աշխատանք կոլխոզներն ու կոլխոզնիկները կառուցել ու կառուցում են լուսավոր ու մաքուր բնակարաններ իրենց բոլոր հարմարություններով: Զափազանց շատ և այն կոլխոզնիկների թիվը, վորոնք կղմինդրածածկ յերկշարկանի, տախտակած առաստաղով ու հատակով բնակարաններ են կառուցել: Կառուցում են ակումբներ, գյուղխորհուրդների և կոլխոզների գրասենյակներ, մաքուր ու լուսավոր գոմեր, պահեստներ և բազմատեսակ այլ շինություններ:

Շատ գյուղեր յենթարկված են պլանավորման, կառուցվում են կուլտուրայի և հանգստի պարկեր, բաղնիքներ, ճաշարաններ, հացի վուեր և այլն:

Այս բոլորը կատարվել ու կատարվում ե՝ գյուղատընտեսության կոլեկտիվացման, նրա առատ բերքատվության շնորհիվ: Խորհրդային բոլոր ժողովուրդների նման, մեր աշխատավորությունն ուրախ ե ու յերջանիկ, աշխատասեր և ու մարտնչող:

19 տարիների ընթացքում իսպառ վորխել ե Խորհրդային Հայաստանը, ուղղակի դարձել ե անճանաչելի: Հանրապետության մայրաքաղաքը այժմ ունի այն ամենը, ինչ ունեն մեր յեղայրական հանրապետությունների մայրաքաները: Յերևանում կառուցված մի շարք գործարանները, թատրոնները, կինոները, բնակելի ու հյուրանոցային

բազմահարկ ամուր շենքերը, ասֆալտապատված ու սալահատակված լայն ու լուսավոր փողոցները, կուլտուրայի ու հանդստի պարկերը, մի քանի փողոցներով անցնող տրամվայները, հսկա ելեկտրոկայանները մեր Հանրապետության պարձանքն են հանդիսանում: Դժվար է թվարկել ամենորյա այն խոշոր շինարարությունները, ինչ կատարվում են մայրաքաղաքում: Որինակի համար բավական ե նշել Ստալինի անվան պրոսպեկտը, կայարանի հրապարակն ու նրա շարունակելի փողոցը, ժողովրդի պողումը, վորի վրա ծախսված ե 12 միլիոն ռուբլի և այլն:

Այժմ վանից ձևնարկված ե և Նոյեմբերյան հեղափոխության 20-րդ տարեդարձին պատրաստ կլինի, ճնշվածմարդկության ազատարար, առաջավոր մարդկության մոքել ստեղծագործ, մեր անհաղթ կուսակցությունը ստեղծող Լենինի հուշարձանը:

Վոյջ Հանրապետության ու մայրաքաղաքի աշխատավորությունը մեր փառապանծ կուսակցության ղեկավարությամբ ձևով բերած հաջողությունների համար յերախտաղիտության գլացիունով են հիշում մեծ Ստալինին: Դրոգները, բանաստեղծները, աշուղները իրենց յերգերի լավագույններից լավագույնը նվիրում են նրան, ում անվան հետ ե կապված իրենց հայրենիքի վերածնունդը:

Հայ ժողովրդի ականավոր բանաստեղծ՝ Լենինի շքանշանով պարզաբանված Նայիրի Զարյանն իր յերդերի մի քանի տողերի մեջ այսպիս ե նկարագրել հայ ժողովրդի նվիրվածությունը, անմոռանալի յերախտաղիտության դրացմունքները՝

«Յերգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենին, Դու ազգերի յերգանկության նարտարապետ ու դարրին...: Դուք ոգնուր-յան լույս նետեցիք ժողովրդին իմ չոփած, Դուրս կոչեցիք մահվան վիհակ դեպի կյանքի դուռը բաց... Ենք իմ չժնադ Հայաստանի ծաղկածիծաղ լեռներում

Իր ճար աշխարհն և կառուցում քեզմով լեցուն մի սերունդ։
Յեվ յես նրա ծոցից յելած մի խանդավառ քանասանդ,
Բերում եմ քեզ իմ յերջանիկ ժողովրդի սերը մեծ,
Յերգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենին,
Դու մարդկության յերջանկության նարտարապես ու
դարբին»։

Աղասաղրված, ուրախ ու յերջանիկ Հայաստանի աշխատալորությունը խորհրդային իշխանության տարիներին իր սեփական գոլրոշներում կրթել ու գաստիարակել ե կոռմունիզմի դործի համար մարտնչող մեծ քանակությամբ կադրեր, վորոնք անդուլ պայքարում են կոմունիզմի կառուցման, ժողովրդի բարեկեցիկ կյանքի համար, կադրեր, վորոնք տեխնիկայի թամբին նատած՝ պատվով են արդարացնում իրենց վրա դրված հույսերը։

19 տարիների ընթացքում պատրաստված են՝ 570 ճարագարականներ, 771 գյուղատնտեսներ, 865 անասնաբույժներ և զոռականիկներ, 516 տնտեսագետներ, 949 բժիշկներ, 1.473 մանկալարժներ, 54 արվեստի աշխատողներ, 692 կուռ։ և խորհրդային աշխատողներ և այլն։

Ինչպես նշված կադրերից, նույնպես և ժողունտեսության բոլոր բնադրավառներում խոչոր ու բեղմնավոր աշխատանք կատարողներից ԽՍՀՄ-ի շքանշաններով պարզեցարված են ալելի քան 400 հոգի, Հայկական ԽՍՀ շքանշաններով, պատվողքերով ու զանազան կոչումներով՝ ավելի քան 947 հոգի։ Այս թվերը ցույց են տալիս, մի կողմից, մեր աշխատավորների բեղմնավոր ու ստեղծագործ աշխատանքները, մյուս կողմից մեր կուսակցության ու խորհրդային իշխանության հոգատար վերաբերմունքն ու արժանի գնահատականը։

Հայ ժողովուրդն ու Հայաստանի աշխատավորությունը շարունակ ապացուցել են իրենց համախմբվածությունը, սերն ու նվիրվածությունը մեր մայր կուսակցությանը,

խորհրդային իշխանությանն ու սիրելի Ստալինին։ Նրանք այդ ցույց տվին ԽՍՀՄ-ի և Հանրապետության Դերտգույն Խորհուրդների ընտրությունների ընթացքում, իրենց ձայնը տալով կուսակցական և անկուսակցական Ստալինյան բլոկի թեկնածուների ոգտին։

Հայկական ԽՍՀ Գերազույն Խորհրդի ընտրություններին Հայաստանի աշխատավորների 99,06%-ը մասնակցեցին ընտրությանը և թեկնածուների ոգտին ձայն տվին 99,67%-ը։

Անցյալ յերկու ընտրությունների հարուստ փորձի հիման վրա անց են կացվում Հայկական ԽՍՀ աշխատավորների գեղուտատների տեղական Խորհուրդների ընտրությունները, Հայկական ԽՍՀ Սահմանադրության և աշխատավորների գեղուտատների ըլլանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների կանոնադրության համաձայն։

Այժմյան ընտրությունները բավականին մանրակրկիտ, բազմազան և ավելի շատ աշխատանք են պահանջում։ Այսաւ են նրանք, վորոնք անցյալ ընտրությունների հաջողություններով հարրած՝ յերեխն ինքնահոսի յեն ուտնում ընտրությունների չափազանց պատասխանատու աշխատանքները, կարծելով, թե առանց հետևողական և լուրջ աշխատանք կատարելու, աղիսացիան յուրաքանչյուր ընտրողի չաղցնելու, կստանան այն արդյունքը, ինչ ստացվեց անցյալ ընտրություններին։

Պետք և նկատի ունենալ, վոր Հանրապետության մեջ կան 9 քաղաք, 4 քաղաքային ույլոն, 9 քաղաքատիպ լայր, 38 շրջան, 672 գյուղխորհուրդ, 8 քանվորական ավան։ Պարզ ե ուրեմն, թե վորքան աշխատանք և պահանջուռ՝ նշված Խորհուրդների գեղուտատներ ընտրելու համար։ Նամանականը, վոր ընտրելու յենք 11.965 դեպուտատ, վորոնցից՝ 1.158 ըրմանը հորդների, 740 քաղաքորհուրդների, 351 քաղ.

ռայլսորհուրդների, 9.408 գյուղխորհուրդների 308 առևտնային (վորի հետ հաջված են քաղաքատիպ վայրերը) Խորհուրդների դեպուտատներ:

Յեթե նկատի ունենանք, վոր կազմակերպվել և 1.174 տեղամաս, 770 ընտրական հանձնաժողովներ, 11.965 ոկրուղներ, ապա տեղամասային, ոկրուղային ընտրական հանձնաժողովներում պետք է ընդդրկվեն մոտ 69.426 մարդ, վորից՝ 4.632 հոդի ընտրական հանձնաժողովներում, 51.044 ոկրուղային հանձնաժողովներում և 13.750 տեղամասային հանձնաժողովներում։ Պարզ է, թե վորքան աշխատանք է պահանջվում այդ ուղղությամբ։

Հանձնաժողովների բոլոր անդամներն առաջարկվում են հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների կողմից, հետևապես հանձնաժողովների յուրաքանչյուր անդամ պետք է լինի աշխատող ու պայքարող լավագույն ընկեր։

Հոկտեմբերի 24-ից, վորը հանդիսանում է ընտրությունների կամացանիայի սկիզբը, ծալվելի են գործնական աշխատանքներ, տեղերում ձեռնամուխ են յեղել տեղամասեր, ոկրուղներ կազմելու և հրապարակելու։ Ընտրական ոկրուղային, տեղամասային հանձնաժողովների կազմը ընտրվել և համապատասխան Խորհուրդների կողմից հասատովել ։ Տեղերն են ուղարկված ընտրությունների ձևերը, տեղերում շրջնորհուրդների և քաղխորհուրդների բյութեներ տպագրելու համար։ Համապատասխան քանակությամբ թուղթ արդեն ուղարկված են շրջաններին գյուղական և ավանային Խորհուրդների ընտրության համար տպագրված բյուլետեններ։ Այդեն կազմվել են ընտրողների ցուցակներ և ընտրողները ծանոթացնել են դրանց։

Այդ բոլոր նախապատրաստական ու գործնական աշխատանքները կատարվում են ընտրությունները հաջող անցկաց-

նելու համար։ Այրդեն առաջադրվում են շրջանային, քաղաքային, ույոնական, գյուղական և ավանային Խորհուրդների դեպուտատության թեկնածուների թեկնածությունները։

Մեր շրջանային կուսակցական ու խորհրդային մասսաները պետք են նկատի ունենան, վոր ամենափոքր շրջանում անդամ 200 հոգուց ավելի գեղուտապներ են ընտրվելու։ Անհրաժեշտ է այժմ՝ ինմից լուրջ աշխատանք կատարել՝ լավագույններից լավագույններին առաջարկելու գեղուտատության թեկնածուներ։

Մեր աշխատավորական մասսաները, կունակցական և անկուսակցական բոլցեկները պետք են ընտրեն այնպիսի մարդկանց, վորոնք արտադրության մեջ իրենց արդարացրել են վորաբես ստալինովականներ ու հարվածայիններ, դասակարգային թշնամիների գեմ անողոք մարտնչողներ, աղնիվ ու հայրենասեր, կոմունիստական կուսակցությանը անհօնուրեն նվիրված մարտիներ, ուրիշ խոսքով՝ պայքարի մեջ խասանցիների, արտադրության մեջ ստախանովականների նման մարտիկներ։

Մեր յերկրի ուրախ ու յերջանիկ ժողովուրդները բոլոր Հանրապետություններում ընտրում են իրենց տեղական Խորհուրդները այն պահին, յերբ անդիմական ու կան իմպերիալիստները նվաճողական պատերազմ են մղում, կամենալով աշխարհը վերածել նոր արյունահեղ սպանդանոցի։ Աշխատում են, վորքան հնարավոր և, շատ քանդականոցի։ Աշխատում են, վորքան հնարավոր և, շատ քեզող յերկրներ (ինչպես Թյուրքիան և) ներդրավել պատեշեցող յերկրներ (ինչպես Հայաստանը և) հայուրաքաները հուսազմի որբիտի մեջ, ստեղծել աշխարհը վերաբաժնելու հուսազմի որբիտի մեջ, ստեղծել աշխարհը վերաբաժնելու հուսազմի որբիտի նորոգված վորչ, նոր վերսալյան վորչ։

Դա յե պատճառը, վոր Անդրիան և Թրանսիան ավելի քան յերկու ամիս և, ինչ անիմաստ պատերազմ են մղում Վերմանիայի դեմ։ Ամբողջ աշխարհին հայտնի յե, վոր Վերմանիային իշխանությունը վարել ե ու վարում ե խաղա-

զասիրական քաղաքականություն. այդ եւ ապացուցում ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի արտակարդ հիմներորդ սեսայում ընկեր Մոլոտովի գեկուցումը:

Պաշտպանելով խաղաղասիրական քաղաքականությունը, խորհրդային իշխանությունը աշխատում եւ վոչ միայն ապահովել Սոցիալիզմի յերկրի խաղաղ աշխատանքը, աշխատավորների յերջանիկ կյանքը, այլև աշխատում եւ, վորխաղաղություն լինի ամբողջ աշխարհում, ամեն կերպ ոգնում եւ ու միջոցներ եւ ստեղծում Յեկարպայի ալեկոծված պատերազմից ապահով պահելու մեր սահմանակից ու սահմանից գուրս մանր պետությունների անվտանգությունն ու խաղաղ աշխատանքը: Այդ բանի ապացույցն են Լատվիայի, Լիտվայի, Եստոնիայի հետ կնքած պայմանագրերը: Խաղաղասիրության ու ճնշված ժողովուրդներին ոգնելու փայլուն ապացույցն եւ Արևմտյան Բէլոռուսիայի և Արևմտյան Բէլոռուսիայի գարերից ի վեհ ճնշված ժողովուրդների ապատաղըռումը:

Ինչպես հայտնի յէ, Արևմտյան Բէլոռուսիայի և Արևմտյան Բէլոռախնայի աշխատավորությունը բուռն կերպով ու խանդավառությամբ դիմավորեց Կարմիր բանակի քաջարի դորամասերին, իրենց ընդդիշտ աղատագրողներին: Աշխատավորությունն իր ժողովրդական ժողովների դեպուտատներին նակադ տվեց և բուռն կերպով պահանջեց՝ հաստատել խորհրդային իշխանությունն, մտնել Խորհրդային Ռուսականի և Խորհրդային Բէլոռուսիայի կազմի մեջ:

Ժողովուրդը պահանջեց իր դեպուտատներից՝ բոնազրամել կալվածատերերի, չինովնիկների, պետական ու յեկեղեցական հոգերը, ազգայնացնել բանկերն ու խոշոր արդյունաբերությունները: Արևմտյան Բէլոռախնայի և Արևմտյան Բէլոռուսիայի ժողովրդական ժողովները կատարեցին ժողովրդի բոլոր պահանջները. Ժողովրդական ժողովներն ընտրեցին իրենց լիազորված հանձնաժողովները և ուղարկեցին Մոսկվա՝ դիմելու ԽՍՀՄ Գերագույն Խորհր-

դին, վոր ըավարարի աշխատավորական մասսաների պահանջները:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ հիմներորդ սեսան ընդառաջելով այդ չափազանց նշանակալից պահանջներին՝ վորոշեց՝

«Բավարարել Արևմտյան Ռուսախնայի ժողովրդական ժողովի խնդիրը և Արևմտյան Ռուսախնայի մտցնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների կազմի մեջ, այն վերամիացնելով Ռուսախնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը»:

Նույն ձեռով ու բովանդակությամբ ել վորոշում եւ կայացվել Արևմտյան Բէլոռուսիայի նկատմամբ՝ «Բավարարել Արևմտյան Բէլոռուսիայի ժողովրդական ժողովի խնդիրը և Արևմտյան Բէլոռուսիան մտցնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ, այն վերամիացնելով Բէլոռուսիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը»:

Չոեսնված ցնծությամբ գիմավորեցին Արևմտյան Ռուսախնայի և Բէլոռուսիայի ժողովուրդներն այդ պատմական վորոշումները, նույն ցնծությամբ ու հրճվանքով դիմավորեցին Խորհրդային 170-միլիոնանոց ժողովուրդները արյունակից ու կարգադրել իրենց բելոռուսների և բելոռուսների մուտքը իրենց իրավահավասար մեծ ընտանիքի մեջ:

Մեր լայնածավալ հայրենիքը հզոր եւ ու անպարտելի, խորհրդային ժողովուրդը աշխատող եւ ու մարտնչող, հայրենասեր եւ ու յուրաքանչյուր վերջոկ հողը արյան վերջին կաթիլով պաշտպանող:

Ստալինյան հնդամյակները յերկրին տվին և տալիս են այն ամենը, ինչ հատուկ է Սոցիալիզմի հայրենիքի ել ամենի ծաղկմանն ու զարդացմանը, ինչ անհրաժեշտ է խաղաղ յերջանիկ կյանքի հիմքը, կոմունիզմը պաշտպանելու համար:

Հնդամյակի տարիներին յերկերն ապահովվեց ինքնապաշտպանման ժամանակակից անհրաժեշտ միջոցներով։ Մորհրդային ստեղծագործ, աշխատասեր ժողովուրդն իր հայրենիքը սիրում և սեփական կյանքի նման, պատրաստ և թշնամու վոտնձգության դեպքում ջախջախելու նրան նրա իսկ տերիտորիայում։ Այդ բանի ապացույցն են Խասան լճի շրջանում տեղի ունեցած դեպքերը, վորոնք լի յեն խորհըդային հերոս ժողովրդի խիզախ սահմանապահների անորինակ սխրագործություններով։ Այդ ապացուցում են Արևմբյան Ռէկրախնայի և Բելոռուսիայի տանջլած ժողովուրդներին ազատագրելու ընթացքում, Եհական ջախջախված կառավարության գորքերի դեմ մարտնչելու քաջարի Կարմիր Բանակի կատարած աննման սխրագործությունները։

Այդ և նման վաստերն ապացուցում են այն, վոր խորհրդային ժողովրդի ազատ կյանքի, խաղաղ աշխատանքի, անսահման իրավունքների վրա թշնամիների կատարած յուրաքանչյուր վոտնձգություն կվոչնչացվի նույն ձեզով ու արագությամբ, ինչպես Խասան լճի ու Լեհաստանի շրջաններում, վորովհետև Կարմիր Բանակը նույն խորհրդային հզոր ու անզարտելի բանակի ավանդարդն է։ Զարկ յեղած դեպքում խորհրդային ամբողջ բանակը, 183-միլիոնանոց բանակը պայքարի կնետվի՝ թշնամիներին անխնա ջախջախելու համար։

Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը յեղել և կմնա հավատարիմ մեր հզոր կուսակցությանը, նրա կործածած դեկալար՝ սիրելի Ստալինին։

Հայաստանի աշխատավորությունը ինչպես միշտ, այս անգամ ևս կապացուցի իր սերն ու նվիրվածությունը, մեր կուսակցությանը և Խորհրդային ամենահզոր պետությանը։

Հաջողությամբ ընտրելով շրջանային, քաղաքային, քաղաքային ռայոնական, գյուղական և ավանային Խորհրդաների դեպուտատներին, մեր աշխատավորությունը մի խոշոր

և վճռական ջախջախինչ հարված կհասցնի ժողովրդի վոյքը թշնամիների՝ աջ-արացկիստական-բուխարինական-դաշնակցական-բուրժուա-նացիոնալիստական իժերի մնացորդներին։

Մենք վստահ ենք, վոր մեր Հանրապետության աշխատավորությունը ինչպես միշտ կլինի և կմնա հավատարիմ ու անձնվեր, մարտնչող ու կրքոտ հայրենասեր, վորովհետև մեզ դեկավարում և ամբողջ աշխարհի ձնչված մարդկութբան սիրելի, կոմունիզմի լուսատու ջահ, մեր յերջանիկ կյանքի հիմնադիր՝ մեծ Ստալինը։



Տեխն. լսմբ. Ս. Խաչատրյան

Պատ. որբագրիչ Լ. Արովյան

Պալմիտի լիազոր Ն Կ. 2537, հըստ. Ա 763

Պատվեր Ա 248, տիրաժ 10.000

Հանձնվել և արտադրության 26/XI 1939 թ.

Ստորագրվել և տպագրելու 28/XI 1939 թ.

Գինը 30 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպալան,
Երևան, Ալլահիկողյան Ա 65

Հայաստանի Ազգային գրադարան



NL0428340

14139

9660 30 ч.

М. ГАДЛЯН

СОВЕТСКАЯ АРМЕНИЯ ЗА ДЕВЯТНАДЦАТЬ ЛЕТ

Государственное издательство политической литературы
Ереван • 1939